# ՀԾ-Առևտուր 7

*Դասընթացի առաջադրանքներ*

Հայկական Ծրագրեր
Ուսումնական Կենտրոն
2024

## Բովանդակություն


***Բովանդակություն* ........ *2***
***Մուտք համակարգ* ........ *4***
***Գլխավոր էջ* ........ *7***
***Ադմինիստրատորի գործիքներ ենթահամակարգ* ........ *8***
***Տվյալների պահոցներ* ........ *8***
***Աշխատանքային միջավայր* ........ *11***
*Գլխավոր պատուհան* ........ *11*
*Աշխատանք թվային տիպի դաշտերի հետ* ........ *12*
*Աշխատանք ամսաթիվ տիպի դաշտերի հետ* ........ *12*
***Դրույթներ* ........ *12***
***Պահեստ ենթահամակարգ* ........ *16***
**Տեղեկատուներ ........ 16**
*Ապրանքներ և ծառայությունների խմբեր* ........ *17*
*Ապրանքներ և ծառայություններ* ........ *17*
*Չափման միավորներ* ........ *19*
*Արտադրողներ* ........ *19*
*Պահեստներ* ........ *24*
***Փաստաթղթեր* ........ *25***
*Ապրանքների մնացորդների մուտք* ........ *25*
***Գնումներ ենթահամակարգ* ........ *28***
**Տեղեկատուներ ........ 28**
*Գների տեսակներ* ........ *28*
*Դրամարկղեր* ........ *30*
*Գործընկերների խմբեր* ........ *32*
*Գործընկերներ* ........ *33*
*Հաշվարկային հաշիվներ* ........ *34*
***Մատյաններ* ........ *35***
**Բոլոր փաստաթղթերը ........ 35**
*Հաշվարկային հաշիվների, դրամարկղի մնացորդների մուտք* ........ *35*
*Գործընկերների մնացորդների մուտք* ........ *37*
**Գնման փաստաթղթեր մատյան ........ 38**
*Պահեստի մուտքի օրդեր* ........ *39*
*Փաստաթղթի հետ աշխատանքի գործիքներ* ........ *41*
*Ստեղծել փաստաթղթի հիման վրա* ........ *42*
**Փաստաթղթեր ........ 45**
*Պահեստի մուտքի օրդեր (Մանրածախ)* ........ *45*
*Պահեստի մուտքի օրդեր (Ներմուծում)* ........ *46*
*Պահեստի մուտքի օրդեր* ........ *47*
*Վճարման հանձնարարագիր* ........ *49*
*Բանկի ելք* ........ *51*
*Ապրանքների տեղաշարժ* ........ *52*
*Կոմպլեկտավորում* ........ *55*
***Վաճառքներ ենթահամակարգ* ........ *57***
**Փաստաթղթեր ........ 57**
*Հաշիվ-Ապրանքագիր* ........ *57*
*Վերադարձ գնորդից* ........ *61*
**Մատյաններ ........ 63**
*Հարկային հաշիվներ* ........ *63*
***Ադմինիստրատորի գործիքներ ենթահամակարգ* ........ *63***

*Օգտագործողներ* ........ *63*
*Վաճառք (Կտրոն)* ........ *75*
*Բանկի մուտք* ........ *78*
*Դրամարկղի մուտքի օրդեր* ........ *79*
*Ապրանքների գույքագրում* ........ *80*
***Մոբայլ հավելված* ........ *82***
***Ինքնուրույն աշխատանքների բաժին* ........ *87***
Առաջադրանք N1 ........ 87
Առաջադրանք N2 ........ 87
Առաջադրանք N3 ........ 87
Առաջադրանք N4 ........ 87
Առաջադրանք N5 ........ 89

## Մուտք համակարգ

Ամպային տարբերակ

Առաջին անգամ համակարգ մուտք գործելիս բացվում է Մուտքի պատուհանը: Ամպային օգտագործող ավելացնելու համար անհրաժեշտ է գրանցվել:




Անհրաժեշտ է սեղմել Գրանցվել կոճակը, Էլ. հասցե դաշտում նշել օգտագործողի էլեկտրոնային հասցեն և սեղմել Ուղարկել հաստատման կոդը:



Նշված էլեկտրոնային հասցեին կուղարկվի հաստատման կոդ, որը պետք է լրացնել Ստուգման կոդ դաշտում և սեղմել *Հաստատել կոդը*: Նոր գաղտնաբառ դաշտում անհրաժեշտ է մուտքագրել օգտագործողի գաղտնաբառը, այնուհետև կրկնել գաղտնաբառը և սեղմել Գրանցվել:




Գրանցումն ավարտելուց հետո բացվում է Աշխատանքի սկիզբ պատուհանը, որտեղ Օգտագործող դաշտում ավտոմատ լրացվում են Օգտագործողի տվյալները:




Աշխատանքի սկիզբ հիբրիդ պատուհանում առանձնացված են լոկալ և ամպային տարբերակները: Ամպային օգտագործողով հնարավոր է մուտք գործել ինչպես լոկալ համակարգչում գտնվող տվյալների պահոցներ, այնպես էլ ՀԾ սերվերային տարածքում գտնվող ամպային պահոցներ: Լոկալ տարբերակը ընտրելու դեպքում Տվյալների պահոց դաշտում կառաջարկվեն տվյալ համակարգչում կամ լոկալ ցանցում գտնվող տվյալների պահոցները: Ամպային տարբերակը նշելու դեպքում կառաջարկվեն տվյալ օգտագործողին հասանելի ամպային տվյալների պահոցները: Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է ընտրել Տվյալների պահոցը, որի հետ աշխատելու է տվյալ օգտագործողը և սեղմել Կատարել կոճակը:

Լոկալ տարբերակ

Առաջին անգամ համակարգ մուտք գործելիս առաջարկվում է ստեղծել TDefault տվյալների պահոց, որի անվանումն ու մեկնաբանությունը կարելի է խմբագրել:



Կատարել կոճակը սեղմելով՝ բացվում է Աշխատանքի սկիզբ պատուհանը: Համակարգն առաջարկում է ADMIN անունով օգտագործող, որը լիազորված է ադմինիստրատորի իրավունքներով և չունի Գաղտնաբառ:




## Գլխավոր էջ




Առաջադրանք:
Բացել ***Գլխավոր էջը***: Այստեղ ցուցադրված են ենթահամակարգերը՝ սալիկների տեսքով: Ընտրել **Ադմինիստրատորի գործիքներ** ենթահամակարգը:




## Ադմինիստրատորի գործիքներ ենթահամակարգ

Ենթահամակարգն ընտրելուց հետո ցուցադրվում են ընթացիկ ենթահամակարգին վերաբերող գործողությունները: Համակարգը Ձեր բոլոր տվյալները պահում է տվյալների պահոցում (ՏՊ): Տվյալների պահոցներ թղթապանակում երևում են համակարգին հասանելի բոլոր ՏՊ-ները:

## Տվյալների պահոցներ

Մուտք ենք գործում **Ադմինիստրատորի գործիքներ** ենթահամակարգ և ցանկից ընտրում **Տվյալների պահոցներ**:




Տարբեր ՏՊ-ներով աշխատելը հնարավորություն է տալիս վարել մի քանի հաշվառում:

Տվյալների պահոց ստեղծելու համար ժապավենից կանչենք Ավելացնել կոճակը Ավելացնել: Բացված պատուհանում Անվանում և Մեկնաբանություն դաշտերը պարտադիր են լրացման համար. դրանք դեղին են և դաշտերի կողքին կա կարմիր նշան, որի վրա մկնիկը պահելով համակարգը հուշում է, որ այն չի կարող դատարկ լինել: Անվանում դաշտում լրացվում է ընկերության անվանումը կամ հապավումը լատինատառ և առանց բացատների:

Առաջադրանք:

Ավելացնել նոր տվյալների պահոց: Անվանումը՝ TGROUP00, Մեկնաբանությունը՝ Ուսումնական պահոց:




Դաշտից դաշտ անցնելու համար օգտագործվում է մկնիկը կամ ստեղնաշարից Tab, Enter կոճակները: Ներքևում երևում է օգտագործողների հասանելիությունն ըստ ենթահամակարգերի: Ունենք Admin օգտագործող, ով ունի բոլոր ենթահամակարգերին հասանելիություն, սեղմենք Կատարել կոճակը:

Խմբագրենք մեր ավելացրած տողը, դրա համար սեղմենք խմբագրել հրամանը **Խմբագրել** : Այդ հնարավորությունը թույլ է տալիս փոփոխություններ կատարել ստեղծված տվյալների պահոցի ***Մեկնաբանություն*** դաշտում և իրավասությունների հատվածում:




Ոչ մի փոփոխություն չենք կատարի, սեղմենք Կատարել կոճակը:

Փակենք տվյալների պահոցի ցուցակը:




ՏՊ-ն ընտրվում է համակարգ մտնելիս՝ **Աշխատանքի սկիզբ** պատուհանում: Տվյալ աշխատանքի ընթացքում գրանցված կամ կատարված բոլոր գործողությունները կպահվեն այդ ՏՊ-ում:

- Բացել Աշխատանքի սկիզբ պատուհանը
- տվյալների պահոցի ընտրման ցուցակից ընտրել նոր ստեղծված տվյալների պահոցը
- սեղմել Կատարել կոճակը:




Առաջին անգամ մուտք գործելիս ստեղծվում է Տվյալների պահոցի պահուստային պատճենը: Պահուստային պատճենները նախատեսված են տվյալների պահոցի (ՏՊ) ընթացիկ վիճակը հիշելու համար, որպեսզի վթարային իրավիճակներում հնարավոր լինի վերականգնել աշխատունակ ՏՊ:







## Աշխատանքային միջավայր

Համակարգի պատուհանի վերևի հատվածում երևում է, թե որ պահոցի հետ ենք աշխատում: Կարգավիճակի վահանակում երևում է օգտագործողի անվանումը -ADMIN, աշխատանքային ժամանակահատվածը, որը համակարգի կողմից ավտոմատ լրացվում է, երբ ստեղծվում է տվյալների պահոցը: Յուրաքանչյուր օգտագործող կարող է ունենալ իր աշխատանքային ժամակահատվածը, որը նշում է Admin օգտագործողը: Վահանակում երևում է նաև Հավաստիության ամսաթիվ, որի մասին ավելի ուշ կխոսենք:

Համակարգի աշխատանքի ժամանակ կարող են բաց լինել մի քանի պատուհաններ, բայց յուրաքանչյուր պահի միայն մեկ պատուհան կարող է ակտիվ լինել: Ակտիվ պատուհանի վերադիրը ունի նույն մուգ կանաչ գույնը, ինչպիսին գլխավոր աշխատանքային պատուհանի վերադիրի գույնն է: Ակտիվ պատուհանը մնացած պատուհանների համեմատությամբ գտնվում է ամենավերևի մակարդակում: Ստեղնաշարից մուտքագրումները և արագ հասանելիության ստեղները վերաբերվում են միայն ակտիվ պատուհանին:

### Գլխավոր պատուհան




Ստորև նկարագրված են համակարգի գլխավոր պատուհանի բաժինները.

***Ժապավեն*** - Ժապավենը պարունակում է կոճակներ և ներդիրներ, որոնք թույլ են տալիս կատարել համակարգի տարբեր հրամաններ:

Հաճախ օգտագործվող հրամանները սովորաբար ցուցադրվում են ժապավենից վերև գտնվող ***Արագ հասանելիության վահանակում***:

Ժապավենի ներդիրներում տեղադրված են աշխատանքի ընթացքում կիրառվող հրամանները: Ներդիրները հինգն են:

***Ենթահամակարգեր*** - ***ՀԾ-Առևտուր*** համակարգում ներառված ֆունկցիոնալությունը բաշխված է հետևյալ ենթահամակարգերի միջև՝ ***Գնումներ, Վաճառքներ, Վաճառակետ (POS), Պահեստ, Դրամարկղ/Բանկ, Վերլուծություն, b2b.armsoft հարթակ և Ադմինիստրատորի գործիքներ***: Յուրաքանչյուր ենթահամակարգը պարունակում է համապատասխան հաշվառմանը վերաբերվող փաստաթղթեր, գործողություններ, հաշվետվություններ և տեղեկատուներ:

***Կարգավիճակի վահանակ*** - Գլխավոր պատուհանի ներքևում՝ կարգավիճակի վահանակում, ցուցադրվում է հետևյալ տեղեկատվությունը՝ տվյալների տարածքում ակտիվ պատուհանի աղյուսակի ընթացիկ տողի համարը, բոլոր և նշված տողերի թվերը, հաշվառվող կազմակերպության անվանումը և օգտագործողը, աշխատանքային ժամանակահատվածը, Հավաստիության ամսաթիվը:

### Աշխատանք թվային տիպի դաշտերի հետ

Թվային տիպի դաշտերում կարելի է մուտքագրել միայն թվեր՝ դրական կամ բացասական:
Արժեքը կարելի է խմբագրել ստեղնաշարից, հաշվել կցված հաշվիչով: Բացասական թվերն արտապատկերվում են կարմիր գույնով, նշանն առջևից:
Թիվը ջնջելու համար օգտագործվում են DELETE, BACKSPACE կամ ESC ստեղները: Թվերն արտապատկերվում են տրոհված հազարյակներով:

### Աշխատանք ամսաթիվ տիպի դաշտերի հետ

Ամսաթիվ տիպի դաշտերի արժեքները կարելի է մուտքագրել ստեղնաշարից, ընտրել կցված օրացույցից:
Այս դաշտերի սկզբնական արժեքը հիմնականում ընթացիկ ամսաթիվն է:
Խմբագրելիս բաժանող նշանները մուտքագրելու կարիք չկա, դրանք մշտապես առկա են:
Ամսաթիվը մուտքագրվում է հետևյալ ձևաչափերից մեկով՝ ՕՕ/ԱԱ/ՏՏ կամ ՕՕ/ԱԱ/: Ծրագիրը թույլ չի տալիս գրանցել գոյություն չունեցող կամ ոչ լրիվ մուտքագրված ամսաթվեր (օրինակ՝ 32/03/2013 կամ 31/ /13): Այս դեպքերում հայտնվում է նշան, որը զգուշացնում է սխալ ամսաթվի մասին:
32/03/13 կամ 30/ /13
Օրացույցում անհրաժեշտ ամսաթվը կարելի է ընտրել սլաքների միջոցով: Սլաքներով շարժվելով աջ, ձախ, վերև կամ ներքև, աստիճանաբար փոխվում է ամսաթիվը, այնուհետև ամիսը, հետո տարին և այդպես շարունակ:
**Այսօր** կոճակը հնարավորություն է տալիս արագորեն վերադառնալ ընթացիկ ամսաթվին:

## Դրույթներ

Պատուհանը նախատեսված է համակարգում օգտագործվող օրենսդրական, կազմակերպության և այլ պարամետրերը փոխելու համար: Այն կարելի է կանչել Ժապավենից կամ CTRL+O արագ հասանելիության ստեղնի միջոցով:



Այս պատուհանը բաղկացած է հետևյալ էջերից: Այստեղ առաջարկվում է լրացնել կազմակերպության ռեկվիզիտները, որոնք կօգտագործվեն փաստաթղթեր գրանցելիս և հաշվետվություններ ձևավորելիս:




***Աշխատանքային ժամանակահատվածը*** - Յուրաքանչյուր օգտագործող կարող է ունենալ իր Աշխատանքային Ժամանակահատվածը, բայց առաջնային է համարվում Դրույթներում նշվածը: Եթե օգտագործողի համար սահմանված չէ Ա.Ժ., ապա հիմք է վերցվում Դրույթներում նշվածը: Ա.Ժ.-ը կարող է փոխել միայն ***Admin*** օգտագործողը, մյուս օգտագործողների համար Դրույթների այս էջը փակ է:
***Հավելագին %*** - դաշտը խորը նշանակություն ունի: Համակարգում ապրանքներ մուտքագրելու համար կան ՊՄՕ, ՊՄՕ Ներմուծում և ՊՄՕ Մանրածախ փաստաթղթեր: ՊՄՕ Մանրածախ փաստաթղթում պարտադիր է լրացնել մուտքագրվող ապրանքների վաճառքի գինը, և ***Հավելագին %*** դաշտը կիրառվում է վաճառքի գները առաջարկելու համար: ***Հավելագին %*** կարելի է սահմանել նաև առանձին ապրանքների համար և դա է առաջնային համարվում:
***Ապրանքների արժույթ*** – ամբողջ հաշվառումը, բացի դրամային հաշվառումից կարելի է վարել լրացուցիչ ևս մեկ արտարժույթով (հիմնականում USD-ով), որն ընտրվում է այս դաշտում: Եթե անգամ մեկ փաստաթուղթ կա գրանցված, ապա դաշտի արժեքը փոփոխության ենթակա չէ:
***Փաստաթղթերի խմբային վերագրանցում*** – դաշտը նշված լինելու դեպքում հնարավորություն է տրվում նշել փաստաթղթեր և կատարել խմբային գործողություններ՝ գրանցել կամ սևագիր դարձնել:
***Մասնակցել հաճախորդների փորձի բարելավման ծրագրին*** - եթե համակարգիչը միացված է ինտերնետին, և այս դաշտը նշված է, ապա սխալների մասին հաղորդագրությունները փոխանցվում են Հայկական Ծրագրերի սերվերային համակարգիչ և ուսումնասիրվում են:
**Զեղչեր և բոնուսներ** հատվածում տրվում են զեղչերի կիրառության և բոնուսների հաշվարկի կարգավորումները:




***Քաշային ապրանքի պարամետրեր*** բաժնում կարգավորվում է էլեկտրոնային կշեռքի հետ աշխատանքը: Կարգավորումները բնութագրում են քաշային ապրանքի գծիկավոր կոդը:




***Հատով հաշվառվող ապրանքների պարամետրեր*** բաժնում տրվում են ապրանքներին ավտոմատ գծիկավոր կոդ վերագրելու կարգավորումները:




***Գործընկերոց/աշխատակցի քարտի կոդի պարամետրեր*** բաժնում սահմանվում են Գործընկերների զեղչային/ բոնուսային քարտերի, ինչպես նաև աշխատակիցների քարտերի կարգավորումները:

***Խմբաքանակի հատկություններ*** բաժնում դրոշակների օգնությամբ նշվում են կազմակերպությունում ապրանքների խմբաքանակների հաշվառման համար օգտագործվող հատկությունները: Ապրանքների մուտքագրման ժամանակ հնարավորություն ունենք նշել երկիրը, արտադրողը, տալ տարբեր հատկություններ, այսինքն ավելի խորը հաշվառում տանել:

- Մտնել **Կազմակերպություն** էջ և լրացնել ռեկվիզիտները




Սեղմել ***Կատարել*** կոճակը:

Կարգավիճակի վահանակում այժմ արտացոլվում է նաև կազմակերպության անվանումը:

- Նորից բացել ***Դրույթներ*** պատուհանը:
- Անցնել ***Գույներ և տառատեսակներ*** էջ:

Այս էջում հնարավորություն ունենք փոխելու համակարգի տառաչափերը, գունային թեման:




- Տեղափոխվել ***Տպելու դրույթներ*** էջ:




Այստեղ նշվում են բոլոր տպման տեսքերի կարգավորումները, լինի դա հաշվետվություն թե փաստաթուղթ: Օգտագործողն է որոշում՝ երևան տպման ամսաթիվը, էջի համարները թե ոչ: Հնարավոր է նշել, թե որ տպվող տեսքերում երևա, օր.՝ կազմակերպության անվանումը, վանդակների եզրագծերը և այլն: Նշենք, որ յուրաքանչյուր հաշվետվության համար կարելի է սահմանել առանձին դրույթներ, սակայն եթե դրանք սահմանված չեն, ապա հիմք են ընդունվում այս էջի հայտանիշները:

- Անցնել ***Տպելու ձևանմուշներ*** էջ:

Համակարգում բոլոր փաստաթղթերի համար սահմանված են տարբեր տպման տեսքեր: Կարող ենք նշել, որ եթե տպելու հրաման տրվի, ապա համակարգը միանգամից կկիրառի համապատասխան տպվող տեսքը: Եթե այս պատուհանում նշված չէ տպման տեսքը, ապա համակարգը լռությամբ առաջարկում է որևէ տպվող տեսք:

- Հաջորդ ***Փաստաթղթերի համարներ*** էջում նշվում են փաստաթղթերի համարները: Համակարգում առկա է ավտոհամարակալման հնարավորություն:
- ***Սարքավորումներ*** էջում կատարվում են սարքավորումների (սկաներ, կտրոնի և պիտակի տպիչներ, Էլ. Կշեռք և այլն) կարգավորումները:
- ***Համակարգային*** էջում նշվում է, թե ինչ պարբերականությամբ ստեղծվի պահոցի պահեստային պատճենը:

# Պահեստ ենթահամակարգ

## Տեղեկատուներ

Համակարգում նախատեսված են մի շարք տեղեկատուներ, որոնք հիմնականում օգտագործվում են մուտքագրման դաշտերի լրացման ժամանակ և հեշտացնում են օգտագործողի աշխատանքը: Հաճախ տեղեկատուից տող ընտրելու արդյունքում միաժամանակ լրացվում են նաև փոխկապակցված դաշտեր:
Աշխատանքը սկսենք Պահեստ ենթահամակարգից: Նույն տեղեկատվական տվյալները կարող ենք լրացնել տարբեր ենթահամակարգերից: Առաջին տեղեկատուն, որի հետ աշխատելու ենք Ապրանքների և ծառայությունների խմբերն է: Նոր ստեղծված ՏՊ-ում, որպես օրինակ, արդեն մուտքագրված են խմբեր, որով կարելի է ուղղորդվել խմբերը ձևավորելիս:

**Ապրանքներ և ծառայությունների խմբեր**

Պահեստ-Տեղեկատուներ- Ապրանքներ և ծառայությունների խմբեր

*Ապրանքներ և ծառայություններ* տեղեկատուին պատկանող բոլոր ապրանքները կամ ծառայությունները կարելի է խմբավորել ըստ որոշակի հայտանիշների. օրինակ՝ կարելի է կենցաղային տեխնիկան խմբավորել ըստ Սառնարաններ, Արդուկներ և Թեյնիկներ տեսակների: Խմբերն օգտագործվում են փաստաթղթերի մուտքագրման, հաշվետվությունների ձևավորման և այլ գործողությունների ժամանակ:

Առաջադրանք:

Ավելացնել նոր խումբ *100* կոդով և *Աուդիո և Վիդեոտեխնիկա* անվանումով, որի տակ բացել ենթախմբեր՝ *110- Հեռուստացույցներ, 120- Վիդեո նվագարկիչներ, 130- Աուդիո համակարգեր*:




Նման ձևով ավելացնել հետևյալ խմբերն ու ենթախմբերը.

**Ապրանքների և ծառայությունների խմբեր**

| Կոդ | Անվանում | Կուտակիչ |
|---|---|---|
| 100 | Աուդիո և Վիդեոտեխնիկա | |
| 110 | Հեռուստացույցներ | 100 |
| 120 | Վիդեո նվագարկիչներ | 100 |
| 130 | Աուդիո համակարգեր | 100 |
| 200 | Ֆոտո և Վիդեո պարագաներ | |
| 210 | Թվային ֆոտոխցիկներ | 200 |
| 220 | Տեսախցիկներ | 200 |
| 300 | Համակարգչային տեխնիկա | |
| 310 | Համակարգիչներ | 300 |
| 320 | Նոութբուքեր | 300 |
| 330 | Պլանշետներ | 300 |

**Ապրանքներ և ծառայություններ**

***Պահեստ-Տեղեկատուներ- Ապրանքներ և ծառայություններ:***

Այս տեղեկատուն պարունակում է ապրանքների և ծառայությունների մասին տվյալներ, որոնք օգտագործվում են ձեռքբերման, իրացման կամ պահեստային գործողություններ կատարելիս:




Առաջադրանք:

Լրացնել ստորև նշված ապրանքը.




Կարելի է տեղադրել ապրանքի նկարը:

## Չափման միավորներ

Այս տեղեկատուն արդեն լրացված է, բայց եթե ունենք յուրահատուկ չափման միավոր, որը առկա չէ ցանկում, կարող ենք ավելացնել այն:
Առաջադրանք:
Ավելացնել նոր չափման միավոր օր.՝ ծառայության համար.

- **Կոդ**- 401
- **Անվանում**- Ամիս
- **Հապավում**- ամիս:




## Արտադրողներ

Տեղեկատուն կարող է պարունակել արտադրող կազմակերպությունների ցուցակը: Կարող է օգտագործվել Պահեստի մուտքի օրդեր փաստաթղթում՝ որպես ապրանքի խմբաքանակը բնութագրող արժեք:
Առաջադրանք:
Ավելացնենք նոր **Արտադրող**.

- **Կոդ**- 001
- **Անվանում**- Panasonic Corporation:




Առաջադրանք:

Խմբագրել 1001 կոդով տեղեկատուն և լրացնել **Այլ տվյալներ** էջը:




Լրացնել ստորև նշված ապրանքները: Քանի որ կան կրկնվող դաշտեր, 1001 կոդով ապրանքի կոնտեքստային ցանկից օգտագործել ***Պատճենել*** հրամանը:







Ապրանքի **Կոդ** դաշտը խմբագրման ենթակա չէ: Եթե սխալ կոդ ենք նշել, ապա այն հնարավոր է փոխել ***Խմբագրել կոդը*** հրամանի միջոցով, որը կարելի է ընտրել ապրանքի կոնտեքստային ցանկից:







Միևնույն ապրանքը կարող է ունենալ մեկից ավելի չափման միավորներ: Որպես հիմնական չափման միավոր նշվում է ելքային, առավել հաճախ օգտագործվող չափման միավորը:

*Ուշադրություն դարձնենք, որ լրացուցիչ չափման միավորը չի լրացվում:*

Անհրաժեշտության դեպքում, նոր ապրանքի համար պետք է տեղափոխվել **Չափման միավորներ էջ** և ավելացնել լրացուցիչ չափման միավոր:

Առաջադրանք:

- Ավելացնել նոր ապրանք




- Սեղմել *Հիշել* կոճակը և տեղափոխվել **Չափման միավորներ** էջ:




- Ավելացնել նոր տող:
- **Կոդ** դաշտում ընտրել 002-տուփ:
- **Գործակից** դաշտում նշվում է, թե 1 տուփի մեջ քանի հատ ապրանք կա: Օրինակ՝ նշել 10:




- Սեղմել *Հիշել* կոճակը, վերադառնալ **Ընդհանուր էջ** և **Լրացուցիչ չափման միավոր** դաշտում ընտրել 002:




- Լրացուցիչ չափման միավորի համար նույնպես կարելի է նշել առանձին գծիկավոր կոդ: Տեղափոխվել **Գծիկավոր կոդեր էջը** և **Լրացուցիչ չափման միավորի** համար նշել գծիկավոր կոդ:




- սեղմել *Հիշել և փակել*:

**Պահեստներ (Խանութներ)**

Այս տեղեկատուն պարունակում է ապրանքների պահպանման վայրերի մասին տվյալներ, որոնք օգտագործվում են փաստաթղթեր գրանցելիս և խմբագրելիս: Օրինակ՝ պահեստներ, խանութներ, բաժիններ և այլն: Տեղեկատուում կարելի է գրանցել ցանկացած քանակությամբ պահեստներ, սակայն գոնե մեկ պահեստի գոյությունն անհրաժեշտ է:
Առաջադրանք:
Մուտք գործել **Պահեստ ենթահամակարգ- Տեղեկատուներ-Պահեստներ (Խանութներ)**:
Ավելացնել Կենտրոնական պահեստ տեղեկատուն:

- **Կոդ** – 01
- **Պահեստապետ**-Ս. Կարապետյան (օգտագործվում է փաստաթղթերում)
- ***Հասցե***-ք. Երևան, Չարենցի 1




Լրացնել հետևյալ պահեստները.




| Կ. | Անվանում | Պահեստապետ | Հասցե |
|---|---|---|---|
| 01 | Կենտրոնական պահեստ | Կարապետյան Սերգեյ | ք. Երևան, Չարենցի 1 |
| 02 | Առևտրի սրահ | Սիմոնյան Արմեն | ք. Երևան, Ամիրյան փող. 15 |
| 03 | Համակարգիչների հավաքման բաժին | Պողոսյան Հարություն | ք. Երևան, Ամիրյան փող. 24 |
| 04 | Դալմա տոնավաճառ | Դարիբյան Լևոն | |

## Փաստաթղթեր

### Ապրանքների մնացորդների մուտք

Այս փաստաթուղթն օգտագործվում է համակարգի շահագործման սկզբում ապրանքների խմբաքանակային մնացորդների մուտքագրման համար: Նույն փաստաթղթում կարելի է մուտքագրել նախկինում ձեռքբերված խմբաքանակի մնացորդները ըստ պահեստների՝ նշելով դրամային (առանց ԱԱՀ և ներառյալ ԱԱՀ-ն) և արտարժութային ինքնարժեքները:

Առաջադրանք:

Անհրաժեշտ է մուտքագրել արդեն գործող առևտրային կազմակերպության ապրանքային մնացորդները **Պահեստ** ենթահամակարգում: Ենթադրենք, որ աշխատանքը սկսելու ենք 01.01.24թ., այդ դեպքում մնացորդների մուտքը պետք է ձևակերպել 31.12.23թ.-ին:

Համակարգում ունենք այդպիսի փաստաթուղթ՝ **Ապրանքների մնացորդների մուտք**, որի օգնությամբ էլ կկատարենք մնացորդների մուտքագրումը:

- Բացել **Ապրանքների մնացորդների մուտք** փաստաթուղթը:






- **Ամսաթիվ** - նշել գործողությունները սկսելու ամսաթվի նախորդ օրը՝ 31.12.23թ.: Անհրաժեշտ է աշխատանքային ժամանակահատվածը փոխել: Մենք հատուկ օգտագործողի համար չենք նշել աշխատանքային ժամանակահատված, և Admin օգտագործողը օգտագործում է Դրույթներում նշված Աշխատանքային ժամանակահատվածը: Այդ պատճառով, փոփոխությունը կատարել Դրույթներում:
- Մտնել **Դրույթներ** և **Աշխատանքային ժամանակահատվածի սկիզբը** սահմանել 31.12.23թ.:
- Ակտիվացնել **Ապրանքների մնացորդների մուտք** փաստաթուղթը:
- **Փաստաթղթի համար –** գրենք «Մնացորդ»:
- **Պահեստ** – չնշել, համակարգը հնարավորություն է տալիս մուտքագրել միաժամանակ մի քանի պահեստների ապրանքային մնացորդներ մեկ փաստաթղթով:
- **Գծիկավոր կոդ** – ապրանքների ցանկը լրացնելիս յուրաքանչյուր ապրանքի համար կարելի է նկարագրել գծիկավոր կոդ, այդ նույն գծիկավոր կոդերը այստեղ նշելով՝ կամ ձեռքով կամ սկաների միջոցով, ավտոմատ կավելանան համապատասխան ապրանքների տողերը: Այժմ՝ չլրացնել:




- Նման ձևով լրացնել ստորև նշված ապրանքների մնացորդները.

| Պահեստ | Կոդ | Անվանում | Միավոր | Հապավում | Քանակ | Գին(Առանց ԱԱՀ) | Գումար(Առանց ԱԱՀ) | ԱԱՀ | Գին(Ներառյալ ԱԱՀ) | Գումար(Ներառյալ ԱԱՀ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 01 | 1001 | Հեռուստացույց LED Panasonic TX-LR... | 001 | հատ | 3.000 | 575,000.00 | 1,725,000.00 | ☑ | 690,000.00 | 2,070,000.00 |
| 01 | 1002 | Հեռուստացույց LED SONY KDL-55W9... | 001 | հատ | 2.000 | 623,000.00 | 1,246,000.00 | ☑ | 747,600.00 | 1,495,200.00 |
| 01 | 2003 | Տեսախցիկ Panasonic HDC-HS9EE-S | 001 | հատ | 2.000 | 277,400.00 | 554,800.00 | ☑ | 332,880.00 | 665,760.00 |
| 01 | 3004 | Նոութբուք SAMSUNG 670Z5E NP670Z... | 001 | հատ | 2.000 | 319,500.00 | 639,000.00 | ☑ | 383,400.00 | 766,800.00 |
| 01 | 3009 | Քայս MERCURY KM-81 | 001 | հատ | 14.000 | 13,000.00 | 182,000.00 | ☑ | 15,600.00 | 218,400.00 |
| 01 | 3011 | Մուկ Genius NetScroll 6000 Wireless,... | 001 | հատ | 2.000 | 14,000.00 | 28,000.00 | ☑ | 16,800.00 | 33,600.00 |
| 01 | 3012 | Մուկ Genius Netscroll 120, Laser, USB | 001 | հատ | 1.000 | 28,000.00 | 28,000.00 | ☑ | 33,600.00 | 33,600.00 |
| 01 | 6001 | Տպիչ SAMSUNG ML-2160 | 001 | հատ | 1.000 | 22,680.00 | 22,680.00 | ☑ | 27,216.00 | 27,216.00 |
| 01 | 6004 | Սկաներ Canon LIDE 110, A4, USB | 001 | հատ | 1.000 | 32,400.00 | 32,400.00 | ☑ | 38,880.00 | 38,880.00 |
| 01 | 7001 | Փոշեկուլ Panasonic MC-E9003-ZUR | 001 | հատ | 1.000 | 47,800.00 | 47,800.00 | ☑ | 57,360.00 | 57,360.00 |
| 01 | 7003 | Փոշեկուլ SAMSUNG VCC-4520S | 001 | հատ | 2.000 | 21,460.00 | 42,920.00 | ☑ | 25,752.00 | 51,504.00 |
| 01 | 7005 | Սառնարան SAMSUNG SR-21NME 219L | 001 | հատ | 1.000 | 101,250.00 | 101,250.00 | ☑ | 121,500.00 | 121,500.00 |
| 01 | 7007 | Արդուկ PHILIPS GC-2021 | 001 | հատ | 3.000 | 8,900.00 | 26,700.00 | ☑ | 10,680.00 | 32,040.00 |
| 01 | 7010 | Լվացքի մեքենա SAMSUNG WF0590N... | 001 | հատ | 1.000 | 141,750.00 | 141,750.00 | ☑ | 170,100.00 | 170,100.00 |

Այնուհետև նույն փաստաթղթում լրացնել մանրածախ պահեստի ապրանքների մնացորդները:

- Ավելացնել նոր տող
- Ընտրել պահեստ 02 և այստեղ նկարագրել վաճառքի գները
- Լրացնել ստորև նկարագրված ապրանքների մնացորդները.

| | Պահեստ | Կոդ | Անվանում | Միավոր | Չափավոր | Քանակ | Գին(Առանց ԱԱՀ) | Գումար(Առանց ԱԱՀ) | ԱԱՀ | Գին(Ներառյալ ԱԱՀ) | Գումար(Ներառյալ ԱԱՀ) | Վաճառքի գին դրամով | Վաճառքի գումար դրամով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 02 | 1001 | Հեռուստացույց LED Panasonic... | 001 | հատ | 1.000 | 575,000.00 | 575,000.00 | ☑ | 690,000.00 | 690,000.00 | 750,150.00 | 750,150.00 |
| | 02 | 2003 | Տեսախցիկ Panasonic | 001 | հատ | 1.000 | 277,400.00 | 277,400.00 | ☑ | 332,880.00 | 332,880.00 | 411,000.00 | 411,000.00 |
| | 02 | 3004 | Նոութբուք SAMSUNG | 001 | հատ | 2.000 | 319,500.00 | 639,000.00 | ☑ | 383,400.00 | 766,800.00 | 484,500.00 | 969,000.00 |
| | 02 | 3012 | Մուկ Genius Netscroll 120, Las... | 001 | հատ | 3.000 | 2,800.00 | 8,400.00 | ☑ | 3,360.00 | 10,080.00 | 4,450.00 | 13,350.00 |
| | 02 | 3034 | Ֆլեշ հիշողություն Transcend... | 001 | հատ | 1.000 | 5,160.00 | 5,160.00 | ☑ | 6,192.00 | 6,192.00 | 8,250.00 | 8,250.00 |
| | 02 | 6006 | Սկաներ HP ScanJet 4600p, A4... | 001 | հատ | 1.000 | 28,000.00 | 28,000.00 | ☑ | 33,600.00 | 33,600.00 | 44,600.00 | 44,600.00 |
| | 02 | 7002 | Փոշեկուլ Panasonic MC-CG524... | 001 | հատ | 1.000 | 40,000.00 | 40,000.00 | ☑ | 48,000.00 | 48,000.00 | 65,800.00 | 65,800.00 |
| | 02 | 7003 | Փոշեկուլ SAMSUNG VCC-4520S | 001 | հատ | 1.000 | 21,460.00 | 21,460.00 | ☑ | 25,752.00 | 25,752.00 | 39,300.00 | 39,300.00 |
| | 02 | 7005 | Սառնարան SAMSUNG SR-21N... | 001 | հատ | 1.000 | 101,250.00 | 101,250.00 | ☑ | 121,500.00 | 121,500.00 | 168,500.00 | 168,500.00 |
| | 02 | 7007 | Արդուկ PHILIPS GC-2021 | 001 | հատ | 3.000 | 8,900.00 | 26,700.00 | ☑ | 10,680.00 | 32,040.00 | 15,250.00 | 45,750.00 |
| | 02 | 7010 | Լվացքի մեքենա SAMSUNG W... | 001 | հատ | 1.000 | 141,750.00 | 141,750.00 | ☑ | 170,100.00 | 170,100.00 | 193,400.00 | 193,400.00 |
| ▸ | 02 | 7011 | Լվացքի մեքենա SAMSUNG W... | 001 | հատ | 1.000 | 117,800.00 | 117,800.00 | ☑ | 141,360.00 | 141,360.00 | 179,500.00 | 179,500.00 |

Լրացված փաստաթուղթը պետք է ունենա հետևյալ տեսքը.




| | Հ/Հ | Պահեստ | Կոդ | Անվանում | Միավոր | Չափավոր | Քանակ | Գին(Առանց ԱԱՀ) | Գումար(Առանց ԱԱՀ) | ԱԱՀ | Գին(Ներառյալ ԱԱՀ) | Գումար(Ներառյալ ԱԱՀ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 01 | 1001 | Հեռուստացույց LED Panasonic TX-LR... | 001 | հատ | 3.000 | 575,000.00 | 1,725,000.00 | ☑ | 690,000.00 | 2,070,000.00 |
| | 2 | 01 | 1002 | Հեռուստացույց LED SONY KDL-55W9... | 001 | հատ | 2.000 | 623,000.00 | 1,246,000.00 | ☑ | 747,600.00 | 1,495,200.00 |
| | 3 | 01 | 2003 | Տեսախցիկ Panasonic HDC-HS9EE-S | 001 | հատ | 2.000 | 277,400.00 | 554,800.00 | ☑ | 332,880.00 | 665,760.00 |
| | 4 | 01 | 3004 | Նոութբուք SAMSUNG 670Z5E NP670Z... | 001 | հատ | 2.000 | 319,500.00 | 639,000.00 | ☑ | 383,400.00 | 766,800.00 |
| | 5 | 01 | 3009 | Քայս MERCURY KM-81 | 001 | հատ | 14.000 | 13,000.00 | 182,000.00 | ☑ | 15,600.00 | 218,400.00 |
| | 6 | 01 | 3011 | Մուկ Genius NetScroll 6000 Wireless,... | 001 | հատ | 2.000 | 14,000.00 | 28,000.00 | ☑ | 16,800.00 | 33,600.00 |
| | 7 | 01 | 3012 | Մուկ Genius Netscroll 120, Laser, USB | 001 | հատ | 1.000 | 28,000.00 | 28,000.00 | ☑ | 33,600.00 | 33,600.00 |
| | 8 | 01 | 6001 | Տպիչ SAMSUNG ML-2160 | 001 | հատ | 1.000 | 22,680.00 | 22,680.00 | ☑ | 27,216.00 | 27,216.00 |
| | 9 | 01 | 6004 | Սկաներ Canon LIDE 110, A4, USB | 001 | հատ | 1.000 | 32,400.00 | 32,400.00 | ☑ | 38,880.00 | 38,880.00 |
| | 10 | 01 | 7001 | Փոշեկուլ Panasonic MC-E9003-ZUR | 001 | հատ | 1.000 | 47,800.00 | 47,800.00 | ☑ | 57,360.00 | 57,360.00 |
| | 11 | 01 | 7003 | Փոշեկուլ SAMSUNG VCC-4520S | 001 | հատ | 2.000 | 21,460.00 | 42,920.00 | ☑ | 25,752.00 | 51,504.00 |
| | 12 | 01 | 7005 | Սառնարան SAMSUNG SR-21NME 219L | 001 | հատ | 1.000 | 101,250.00 | 101,250.00 | ☑ | 121,500.00 | 121,500.00 |
| | 13 | 01 | 7007 | Արդուկ PHILIPS GC-2021 | 001 | հատ | 3.000 | 8,900.00 | 26,700.00 | ☑ | 10,680.00 | 32,040.00 |
| | 14 | 01 | 7010 | Լվացքի մեքենա SAMSUNG WF0590N... | 001 | հատ | 1.000 | 141,750.00 | 141,750.00 | ☑ | 170,100.00 | 170,100.00 |
| | 15 | 02 | 1001 | Հեռուստացույց LED Panasonic TX-LR... | 001 | հատ | 1.000 | 575,000.00 | 575,000.00 | ☑ | 690,000.00 | 690,000.00 |
| | 16 | 02 | 2003 | Տեսախցիկ Panasonic HDC-HS9EE-S | 001 | հատ | 1.000 | 277,400.00 | 277,400.00 | ☑ | 332,880.00 | 332,880.00 |
| | 17 | 02 | 3004 | Նոութբուք SAMSUNG 670Z5E NP670Z... | 001 | հատ | 2.000 | 319,500.00 | 639,000.00 | ☑ | 383,400.00 | 766,800.00 |
| | 18 | 02 | 3012 | Մուկ Genius Netscroll 120, Laser, USB | 001 | հատ | 3.000 | 2,800.00 | 8,400.00 | ☑ | 3,360.00 | 10,080.00 |
| | 19 | 02 | 3034 | Ֆլեշ հիշողություն Transcend JetFlas... | 001 | հատ | 1.000 | 5,160.00 | 5,160.00 | ☑ | 6,192.00 | 6,192.00 |
| | 20 | 02 | 6006 | Սկաներ HP ScanJet 4600p, A4, USB | 001 | հատ | 1.000 | 28,000.00 | 28,000.00 | ☑ | 33,600.00 | 33,600.00 |
| | 21 | 02 | 7002 | Փոշեկուլ Panasonic MC-CG524WR79 | 001 | հատ | 1.000 | 40,000.00 | 40,000.00 | ☑ | 48,000.00 | 48,000.00 |
| | 22 | 02 | 7003 | Փոշեկուլ SAMSUNG VCC-4520S | 001 | հատ | 1.000 | 21,460.00 | 21,460.00 | ☑ | 25,752.00 | 25,752.00 |
| | 23 | 02 | 7005 | Սառնարան SAMSUNG SR-21NME 219L | 001 | հատ | 1.000 | 101,250.00 | 101,250.00 | ☑ | 121,500.00 | 121,500.00 |
| | 24 | 02 | 7007 | Արդուկ PHILIPS GC-2021 | 001 | հատ | 3.000 | 8,900.00 | 26,700.00 | ☑ | 10,680.00 | 32,040.00 |
| | 25 | 02 | 7010 | Լվացքի մեքենա SAMSUNG WF0590N... | 001 | հատ | 1.000 | 141,750.00 | 141,750.00 | ☑ | 170,100.00 | 170,100.00 |
| ▸ | 26 | 02 | 7011 | Լվացքի մեքենա SAMSUNG WF8598N... | 001 | հատ | 1.000 | 117,800.00 | 117,800.00 | ☑ | 141,360.00 | 141,360.00 |
| | | | | | | | 53.000 | | 6,800,220.00 | | | 8,160,264.00 |

Լրացվող փաստաթղթի գլխավոր ներդիրի ժապավենում ունենք կոճակներ-***Հիշել, Հիշել և փակել, Հիշել և նոր,*** որոնցով փաստաթուղթը գրանցում ենք:

***Հիշելու*** դեպքում կատարված գրառումները պահպանվում են, իսկ փաստաթուղթը բաց է մնում:

***Հիշել և փակելու*** դեպքում փաստաթղթի գրառումները պահպանվում են և այն փակվում է:

***Հիշել և նորի*** դեպքում փակվելուց հետո անմիջապես բացվում է նոր փաստաթուղթ:

- Սեղմել ***Հիշել***:

## Գնումներ ենթահամակարգ

## Տեղեկատուներ

### Գների տեսակներ

Տեղեկատուում մուտքագրվում են կազմակերպությունում գործող գնի տեսակները: Օրինակ՝ մանրածախ, մեծածախ, մատակարարման և այլն: Յուրաքանչյուր ապրանք կամ ծառայություն կարող է ունենալ այնքան գին, որքան գնի տեսակ է սահմանված համակարգում: Գները կարող են ներառել կամ չներառել ԱԱՀ (ավելացված արժեքի հարկ):
Առաջադրանք:
Խմբագրել գների առկա տեսակները, օրինակ՝ մեծածախ գին, մանրածախ գին, և ավելացնել նորերը:
Մուտք գործել ***Գնումներ ենթահամակարգ-Տեղեկատուներ-Գների տեսակներ***:




| Կոդ | Անվանում | Արժույթ | Կլորացման աստ... | ԱԱՀ-ն այդ թվում |
|---|---|---|---|---|
| 01 | Մեծածախ | AMD | 0.01 | ☐ |
| 02 | Մանրածախ | AMD | 0.01 | ☐ |
| 03 | Գնման Գին | AMD | 0.01 | ☐ |

- Խմբագրել **Մեծածախ** գին տողը
- **Կլորացման աստիճան**-համակարգում գների կլորացումը կատարվում է միշտ դեպի վերև: Օրինակ՝ եթե ընտրված է Կլորացնել մինչև 5, ապա 0.10 դրամը (10 լուման) կկլորացվի մինչև 5 դրամի:
- **ԱԱՀ այդ թվում**-դրոշակը նշված լինելու դեպքում տվյալ գնի տեսակի մեջ ներառված է ԱԱՀ-ն:







| Կոդ | Անվանում | Արժույթ | Կլորացման աստ... | ԱԱՀ-ն այդ թվում |
|---|---|---|---|---|
| 01 | Մեծածախ | AMD | 0.01 | ☐ |
| 02 | Մանրածախ | AMD | 0.01 | ☑ |
| 03 | Գնման Գին | AMD | 0.01 | ☐ |
| 04 | Գալաատեա ՄՊԸ-ի գնացուցակ | AMD | 0.01 | ☐ |
| 05 | Տեխնո Պարկի գնացուցակ | USD | 0.01 | ☐ |
| 06 | SAMSUNG-ի գնացուցակ | USD | 0.01 | ☐ |

Գնի տեսակները խմբագրեցինք, կարող ենք փակել և արդեն սահմանել գնացուցակ:
Մուտք գործել ***Գնումներ ենթահամակարգ- Տեղեկատուներ- Ապրանքներ և ծառայություններ***

- Ապրանքի տողի կոնտեքստային ցանկից կանչել ***Գներ***




- Նշել ժամանակահատվածը՝ 01.01.24-31.12.24




- Սեղմել ***Կատարել***
- Ավելացնել նոր գին




- Սեղմել ***Կատարել*** կոճակը

Այսպես, մենք նկարագրեցինք ապրանքի գին մեկ ապրանքի համար:

- Փակել **Գներ** պատուհանը:

**Առաջադրանք:**

Սահմանել ***ապրանքի գին*** մի քանի ապրանքների համար:

- Նշենք այն ապրանքները, որոնց համար ցանկանում ենք գին սահմանել
- Նշումը կատարենք ստեղնաշարի ***Insert*** կոճակով կամ ցանկի տողերում դնենք դրոշակներ:



- Նշված տողերի վրա մկնիկի աջ կտտոցով կանչենք ***Գների ձևավորում*** հրամանը




- **Ամսաթիվ**- 01.01.24
- **Գործողություն**-գին կարող ենք սահմանել մուտքագրման եղանակով, ինչպես նաև բանաձև նկարագրելով և ստանալով գինը, օրինակ, ինքնարժեքից, գնման գնից և այլն: Այս դաշտում կարող ենք նաև հեռացնել նշված ամսաթվով սահմանված գները:
- **Գնի տեսակ**- Մեծածախ
- **Գնի կլորացման աստիճան**-կարող ենք սահմանել:


Գների ձևավորում - 01/01/24 (01 - Մեծածախ, Արժույթ՝ - AMD)

| | Կոդ | Անվանում | Չ/Մ | Ձևավորվող գնի գործ... | Ձևավորվող գնի տեսա... 01 - Մեծածախ (AMD, Առանց ԱԱՀ) |
|---|---|---|---|---|---|
| ☑ | 1001 | Հեռուստացույց LED Panasonic TX-LR55ET5 | հատ | 736,850.00 | 736,850.00 |
| ☑ | 1002 | Հեռուստացույց LED SONY KDL-55W905ABAEP | հատ | 905,800.00 | 905,800.00 |
| ☑ | 1003 | Հեռուստացույց SAMSUNG UE32F5000AWXUZ | հատ | 180,200.00 | 180,200.00 |
| ☑ | 1008 | Միկրո համակարգ Panasonic SC-HC17EE-K | հատ | 48,500.00 | 48,500.00 |
| ☑ | 1009 | Մինի համակարգ SAMSUNG DA-E651/RU | հատ | 41,800.00 | 41,800.00 |
| ☑ | 1010 | MP3/MP4 նվագարկիչ Hama "Sansa" 4Gb | հատ | 11,200.00 | 11,200.00 |
| ☑ | 1011 | MP3/MP4 նվագարկիչ SONY NWZ-B172F/GI | հատ | 17,400.00 | 17,400.00 |
| ☑ | 2001 | Թվային ֆոտոխցիկ Canon PowerShot SX240 HS | հատ | 187,000.00 | 187,000.00 |
| ☑ | 2002 | Թվային ֆոտոխցիկ Canon IXUS 125HS green | հատ | 118,500.00 | 118,500.00 |
| ☑ | 2003 | Տեսախցիկ Panasonic HDC-HS9EE-S | հատ | 405,000.00 | 405,000.00 |

10/10 Կատարել Դադարեցնել

- Բացվող պատուհանում **Ձևավորվող գնի տեսակ** սյան մեջ լրացվում է յուրաքանչյուր ապրանքի արժեքը տվյալ գնի տեսակով:

## Դրամարկղեր

Այս տեղեկատուն պարունակում է դրամարկղերի մասին տվյալներ, որոնք օգտագործվում են դրամարկղի ելքի և մուտքի օրդեր փաստաթղթեր գրանցելիս:
Առաջադրանք:
Տեղեկատուում կարելի է գրանցել ցանկացած քանակությամբ դրամարկղեր, օրինակ՝ Վաճառասրահի դրամարկղ, Հիմնական դրամարկղ և այլն: Մանրածախ առևտրում, որպես դրամարկղ, կարող է հանդես գալ նաև հսկիչ-դրամարկղային մեքենան (ՀԴՄ):

- Լրացնել ***Դրամարկղեր*** տեղեկատուն.




- Ավելացնել նոր դրամարկղ. **Կոդ** - 02, **Անվանում** - Առևտրի սրահի դրամարկղ




## Գործընկերների խմբեր

***Գնումներ-Տեղեկատուներ- Գործընկերների խմբեր:***

Առաջադրանք:

Ավելացնել մատակարարների ենթախումբ.

- ***Կոդ*** - 011,
- ***Անվանում*** - ՀՀ մատակարարներ
- ***Կուտակիչ***- Մատակարարներ




Առաջադրանք:

Ձևավորել հետևյալ խմբերը.



Գործընկերների խմբեր

| Կոդ | Անվանում | Կուտակիչ |
|---|---|---|
| 01 | Մատակարարներ | |
| 011 | ՀՀ մատակարարներ | 01 |
| 012 | Արտերկրյա մատակարարներ | 01 |
| 02 | Գնորդներ | |
| 03 | Առհաշիվ անձինք | |
| 04 | Այլ | |
| 99 | Ծախսեր | |

## Գործընկերներ

Առաջադրանք:

Լրացնել գործընկերների տվյալները.









## Հաշվարկային հաշիվներ

Հանդիսանում է բանկերում կազմակերպության կողմից բացված բոլոր հաշվարկային հաշիվների տեղեկատուն:
Այս տեղեկատուն պարունակում է հաշվարկային հաշիվների մասին տվյալներ, որոնք օգտագործվում են վճարման հանձնարարագիր, բանկի ելք և մուտք փաստաթղթեր գրանցելիս:
Տեղեկատուում կարելի է գրանցել ցանկացած քանակությամբ հաշիվներ: Կազմակերպությունում անկանխիկ դրամական միջոցների հաշվառումը վարվում է Արտարժույթներ տեղեկատուում սահմանված ցանկացած արժույթով:

Առաջադրանք:

Լրացնել ***Հաշվարկային հաշիվներ*** տեղեկատուն

***Գնումներ ենթահամակարգ- Տեղեկատուներ -Հաշվարկային հաշիվներ***

- Ընտրել ***Ավելացնել*** հրամանը




- Ավելացնել ևս մեկ հաշվարկային հաշիվ.



## Մատյաններ

## Բոլոր փաստաթղթերը

### Հաշվարկային հաշիվների, դրամարկղի մնացորդների մուտք

Բացի ապրանքային մնացորդներից կարող ենք ունենալ նաև հաշվարկային հաշիվների մնացորդներ, գործընկերների մնացորդներ և այլն, որոնք նույնպես պետք է մուտքագրել՝ նշելով այն ամսաթիվը, որը նշել ենք ապրանքների մուտքի ժամանակ:
Առաջադրանք:
Ենթադրենք, ունենք մնացորդներ հաշվարկային հաշիվներում, ապա մուտքը անհրաժեշտ է կատարել նույնպես 31.12.23թ.-ով **Բանկի մուտք** փաստաթղթի միջոցով:

- Բացել Բոլոր փաստաթղթերը մատյանը
- Ընտրել ***Ավելացնել*** հրամանը
- Ընտրել ***Բանկի մուտք*** փաստաթուղթը




- **Հաշիվ**-քանի որ ունենք լրացված հաշվարկային հաշիվների տեղեկատու, այստեղ առաջարկում է այն հաշիվը, որը տեղեկատուում նշված էր որպես հիմնական, ընտրում ենք 01-ը, քանի որ մուտքագրում ենք դրամային մնացորդ
- **Ամսաթիվ**-31.12.23
- **Փաստաթղթի N**- Մնացորդ
- **Գումար**-գրել 16,000,000.00 դրամ
- **Խումբ**-գործընկերոջ խումբ չնշել
- **Մեկնաբանություն**-Մնացորդի մուտք




- Հիշել և փակել:

Առաջադրանք:

31.12.23թ. մուտքագրել Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ-ի  հաշվարկային հաշվի մնացորդը արտարժույթով՝ 50,000.00 USD, Փաստաթղթի N՝ Մնացորդ:




- ***Հիշել և փակել***

Առաջադրանք:

Դրամարկղի մնացորդը մուտքագրել ***Դրամարկղի մուտքի օրդեր*** փաստաթղթով:



Այսպիսով մուտքագրեցինք մեր բոլոր դրամային և արտարժույթի մնացորդները հաշվարկային հաշիվներում և դրամարկղում, կարող ենք փակել փաստաթղթերի մատյանը:

## Գործընկերների մնացորդների մուտք

Այս համակարգում գործընկերների հաշվառումը լիարժեք վարելու համար պետք է մուտքագրել նաև գործընկերների մնացորդները: Ենթադրենք գնորդն է մեզ պարտք, կամ մենք ենք պարտք մատակարարին, ինչպես մուտքագրել այդ տվյալները:

Առաջադրանք:

Արտացոլել համակարգում մեր պարտքը Գալատեա ՍՊԸ-ին՝ 56000 դրամ:

- Մուտք գործել ***Գնումներ ենթահամակարգ - Մատյաններ -Բոլոր Փաստաթղթերը***
- ***Ավելացնել***
- Ընտրել ***Գործընկերոջ պարտքի վերանայում*** փաստաթուղթը և համապատասխան դաշտերը լրացնել:




Առաջադրանք:

31.12.23թ. մուտքագրել գնորդ Պարադիզ ՍՊԸ-ի 78,500.00 դր. պարտքը: Փաստաթղթի N՝ Մնացորդ:




- ***Հիշել և փակել:***

## Գնման փաստաթղթեր մատյան

Կանչենք ***Գնման փաստաթղթեր*** մատյանը և տեսնենք, թե փաստաթղթերի ինչ տեսակներ են այստեղ ներառված:

Առաջադրանք:

- Բացել ***Գնումներ ենթահամակարգ-Մատյաններ-Գնման փաստաթղթեր***




- ***Կատարել*** տալուց հետո ***Ավելացնել***

Այստեղ երևում են միայն ձեռքբերման փաստաթղթերը:




Դրանք բոլոր այն փաստաթղթերն են, որոնք դուրս գրելուց հետո կերևան Գնման փաստաթղթերի մատյանում:

**Պահեստի մուտքի օրդեր**

12.01.24թ. համաձայն Ա0065987453 հաշիվ-ապրանքագրի Գալատեա ՍՊԸ-ից գնել ենք հետևյալ ապրանքները: Մուտքագրել ապրանքները Կենտրոնական պահեստ:




***Ընդհանուր*** էջում լրացնել,

- **Խումբ** - 01
- **Մատակարար** - Գալատեա ՍՊԸ
- **Պայմանագիր** - Հիմնական պայմանագիր
- **Հ/Ա-ի համար** - Ա0065987453
- **Մեկնաբանություն** - Համակարգչային ապրանքների ձեռքբերում
  Անցնել ***Ապրանքների ցուցակ*** էջ, որտեղ.
- Սեղմել ***Ավելացնել*** հրամանը և լրացնել ստորև բերված ցուցակը.

| Կոդ | Անվանում | Միավոր | Հապավում | Քանակ | Գին | Գումար | ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3009 | Քայս MERCURY KM-81 | 001 | հատ | 25.000 | 13,900.00 | 347,500.00 | ☑ |
| 3013 | Ստեղնաշար Genius Slimstar I815, Wireless, USB | 001 | հատ | 10.000 | 81,100.00 | 811,000.00 | ☑ |
| 3026 | Ցանցային քարտ | 001 | հատ | 30.000 | 3,500.00 | 105,000.00 | ☑ |
| 3019 | Հիշողություն Kingston DDR3 2Gb 1333MHz | 001 | հատ | 3.000 | 282,000.00 | 846,000.00 | ☑ |
| 3020 | Հիշողություն Kingston DDR3 4Gb 1333MHz | 001 | հատ | 3.000 | 465,000.00 | 1,395,000.00 | ☑ |
| 3031 | Ցանցային HUB D-Link DES-1016D 16x10/100, s... | 001 | հատ | 5.000 | 26,770.00 | 133,850.00 | ☑ |
| 3032 | Դիսկ TDK DVD+RW 4.7Gb, 4x, JewelCase | 001 | հատ | 20.000 | 8,750.00 | 175,000.00 | ☑ |
| 3029 | Դինամիկ Genius SW-HF2.1 1200, Cherry wood 3... | 001 | հատ | 10.000 | 19,800.00 | 198,000.00 | ☑ |
| 3021 | Մայրպլատա Asus H87M-E | 001 | հատ | 16.000 | 39,550.00 | 632,800.00 | ☑ |
| 3022 | Մայրպլատա Gigabyte B85M-D2V | 001 | հատ | 14.000 | 47,500.00 | 665,000.00 | ☑ |
| 3016 | Պրոցեսոր Intel Core i7-3820 3.6 GHz | 001 | հատ | 17.000 | 122,500.00 | 2,082,500.00 | ☑ |
| 3030 | Վիդեո քարտ Sapphire HD 7850 1Gb GDDR5 256bit | 001 | հատ | 30.000 | 34,500.00 | 1,035,000.00 | ☑ |
| 3033 | Ֆլեշ հիշողություն PQI Pen Drive 16GB, U339 | 001 | հատ | 30.000 | 5,900.00 | 177,000.00 | ☑ |
| 3017 | Պրոցեսոր Intel Core i5-3470 3.2 GHz | 001 | հատ | 6.000 | 125,700.00 | 754,200.00 | ☑ |
| 3034 | Ֆլեշ հիշողություն Transcend JetFlash V30 | 001 | հատ | 30.000 | 5,160.00 | 154,800.00 | ☑ |
| 3018 | Պրոցեսոր Intel Core i3-3220 3.3 GHz | 001 | հատ | 6.000 | 58,400.00 | 350,400.00 | ☑ |
| | | | | 255.000 | | 9,863,050.00 | |

Ցուցակը լրացնելուց հետո փաստաթուղթը կունենա հետևյալ տեսքը.




- անցնել վերջին էջ՝ ***Լրացուցիչ***, որտեղ կարելի է նշել, թե ապրանքները ով հանձնեց պահեստ: Այս տվյալներն օգտագործվում են տպման տեսքերում: ***Ընդունեց*** դաշտում գրվում է նյութապատասխանատու անձի անունը, որը նախապես լրացվել է ***Պահեստներ*** տեղեկատուում:
- Սեղմել ***Հիշել և փակել***: Գրանցված վիճակում փաստաթղթում փոփոխություններ չենք կարող կատարել: Ուղղումներ կատարելու համար, փաստաթուղթը անհրաժեշտ է դարձնել ***Սևագիր***:

Բացենք ***Պահեստի մուտքի օրդեր*** փաստաթուղթը:
Վերևի մասում ունենք ***Գլխավոր*** ներդիրը, որին սեղմելով՝ բացվում է ժապավեն՝ մի շարք գործիքներով:




- Սեղմենք ***Դիտել*** հրամանը, որը ցույց է տալիս համակարգի կողմից առաջարկվող տպման տեսքը: Այն կարող ենք արտահանել ***Word կամ Excel***: Տանք ***Արտահանել Word*** հրամանը:
- Ժապավենում առաջարկվում է նաև տվյալ փաստաթղթի տպման ձևանմուշ, որտեղից կարող ենք ընտրություն կատարել: Պահեստի մուտք տպելու ձևանմուշը առաջարկում է մի քանի տարբերակ.




Այն տպման տեսքը, որը միշտ օգտագործելու ենք, ցանկալի է լռությամբ առաջարկվի: Այդ նպատակով՝

- Բացել ***Դրույթները- Տպելու ձևանմուշներ-Պահեստի մուտքի օրդեր***
- ***Տպելու ձևանմուշը*** ընտրել պարզ տեսքը՝ 07.2
- Սեղմել ***Կատարել*** կոճակը




- Բացել *Այլ* ներդիրը




- ***Տպել պիտակ***- Այստեղից կարելի է մեր ցուցակում լրացված ապրանքների համար տպել պիտակներ
- ***Հիշել և փակել***
- Այժմ փաստաթուղթը կհայտնվի ***Գնման փաստաթղթեր*** մատյանում:




## Ստեղծել փաստաթղթի հիման վրա

Ուսումնասիրենք, թե ինչ փաստաթղթեր կարող ենք ստեղծել ***Պահեստի մուտքի օրդեր*** փաստաթղթի հիման վրա:

- Տողի վրայից բացենք կոնտեքստային ցանկը
- Ընտրենք ***Ստեղծել փաստաթղթի հիման*** վրա հրամանը

Համակարգը առաջարկեց մի շարք փաստաթղթեր ստեղծելու հնարավորություն.







***Վճարման հանձնարարագիր***-կարող ենք ստեղծել վճարման հանձնարարագիր և մարել Պահեստի մուտքի օրդերով առաջացած պարտավորությունը
***Դրամարկղի ելքի օրդեր***-նույնպես պարտավորության մարման համար ստեղծվող փաստաթուղթ է
**Բանկի ելք**-առանց հանձնարարագիր ստեղծելու միանգամից կատարում ենք բանկի ելք
***Ապրանքների տեղաշարժ***-եթե ուզում ենք այս օրդերում նկարագրված ապրանքները տեղափոխել այլ պահեստ:
***Հավելյալ ծախսերի բաշխում***- հնարավորություն է տալիս լրացուցիչ ծախսերը ավելացնել ապրանքի ձեռքբերման գնին:
***Վերադարձ մատակարարին***-եթե անհրաժեշտ է ***Պահեստի մուտքի օրդերում*** առկա որոշ ապրանքներ վերադարձնել մատակարարին, ապա ստեղծում ենք այս փաստաթուղթը:
***Պատվեր մատակարարին***- կարող ենք ստեղծել պատվեր մատակարարին՝ պահեստի մուտքի օրդերի հիման վրա նմանատիպ պատվեր ձևավորելու համար:
Առաջադրանք:
Պահեստի մուտքի օրդերի հիման վրա ստեղծել **Հավելյալ ծախսերի բաշխում** փաստաթուղթ:
Ենթադրենք ձեռքբերված ապրանքների տեղափոխումը կատարվել է Սլացք Տրանս ՍՊԸ-ի կողմից:




***Ապրանքի ցուցակ*** էջում լրացվում են ՊՄՕ փաստաթղթում նշված ապրանքները: Տեղափոխման ծախսը կազմել է 25000 դրամ առանց ԱԱՀ, որն ինքնարժեքի վրա բաշխելու համար լրացնում ենք ***Բաշխվող գումար*** դաշտում:



# Փաստաթղթեր

## Պահեստի մուտքի օրդեր (Մանրածախ)

Առաջադրանք:

Մանրածախ պահեստներ մուտք կատարելու համար օգտագործվում է ***Պահեստի մուտքի օրդեր (Մանրածախ)*** փաստաթուղթը: Դիտենք, թե ինչ տեսք ունի այս փաստաթուղթը:

- Ավելացնենք նոր փաստաթուղթ
- Ընտրենք ***Պահեստի մուտքի օրդեր (Մանրածախ)***:




Բացված փաստաթուղթը **Պահեստի մուտքի օրդեր** փաստաթղթից տարբերվում է նրանով, որ այստեղ պետք է լրացվի ***Վաճառքի գին***.



## Պահեստի մուտքի օրդեր (Ներմուծում)

Առաջադրանք:

Ներմուծումներ ունենալու դեպքում օգտագործել ***Պահեստի մուտքի օրդեր (Ներմուծում)*** փաստաթուղթը:

***Ընդհանուր*** էջում լրացնել.

- **Ամսաթիվ** - 16.01.24
- **Պահեստ** - Կենտրոնական պահեստ
- **Խումբ** - Արտերկրյա մատակարարներ
- **Մատակարար** - Техно Парк (Россия)
- **Մաքսատուն** - Արարատյան մաքսատուն
- **Պայմանագիր** - Հիմնական պայմանագիր
- **Հ/Ա-ի համար** – 4578963879
- Մեկնաբանություն – Ներմուծում




Տեղափոխվել Ապրանքների ցուցակ էջ և լրացնել.

- **Արժույթը**- USD, փոխարժեքը լրացվում է տեղեկատուներից, անհրաժեշտության դեպքում հնարավոր է փոխել փոխարժեքը
- **Գնի տեսակը** - Տեխնո Պարկի գնացուցակ




- Լրացնել տողերը.

| Կոդ | Անվանում | Միավոր | Չափավում | Քանակ | Գին արտարժ. | Գումար արտ. | Մաքսային արժեք | Տոկոս | Մաքսատուրք | ԱԱՀ | Գումար ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1004 | Blu-ray նվագարկի... | 001 | հատ | 7.000 | 196.00 | 1,372.00 | 556,318.56 | 0.00 | 0.00 | ☑ | 111,263.71 |
| 1004 | Blu-ray նվագարկի... | 001 | հատ | 3.000 | 180.00 | 540.00 | 218,959.20 | 0.00 | 0.00 | ☑ | 43,791.84 |
| 1006 | DVD նվագարկիչ S... | 001 | հատ | 7.000 | 21.00 | 147.00 | 59,605.56 | 0.00 | 0.00 | ☑ | 11,921.11 |
| 1006 | DVD նվագարկիչ S... | 001 | հատ | 3.000 | 30.00 | 90.00 | 36,493.20 | 0.00 | 0.00 | ☑ | 7,298.64 |
| 7007 | Արդուկ PHILIPS G... | 001 | հատ | 20.000 | 22.00 | 440.00 | 178,411.20 | 0.00 | 0.00 | ☑ | 35,682.24 |
| 7008 | Արդուկ ROWENTA... | 001 | հատ | 20.000 | 28.00 | 560.00 | 227,068.80 | 0.00 | 0.00 | ☑ | 45,413.76 |
| 1001 | Հեռուստացույց LE... | 001 | հատ | 5.000 | 1,420.00 | 7,100.00 | 2,878,908.00 | 0.00 | 0.00 | ☑ | 575,781.60 |
| 1002 | Հեռուստացույց LE... | 001 | հատ | 5.000 | 1,546.00 | 7,730.00 | 3,134,360.40 | 0.00 | 0.00 | ☑ | 626,872.08 |
| 1002 | Հեռուստացույց LE... | 001 | հատ | 5.000 | 1,512.00 | 7,560.00 | 3,065,428.80 | 0.00 | 0.00 | ☑ | 613,085.76 |
| 6002 | Տպիչ HP LaserJet... | 001 | հատ | 4.000 | 1,023.00 | 4,092.00 | 1,659,224.16 | 0.00 | 0.00 | ☑ | 331,844.83 |
| 6006 | Սկաներ HP ScanJe... | 001 | հատ | 7.000 | 69.00 | 483.00 | 195,846.84 | 0.00 | 0.00 | ☑ | 39,169.37 |
| 7001 | Փոշեկուլ Panasoni... | 001 | հատ | 10.000 | 117.00 | 1,170.00 | 474,411.60 | 0.00 | 0.00 | ☑ | 94,882.32 |
| 7002 | Փոշեկուլ Panasoni... | 001 | հատ | 5.000 | 105.00 | 525.00 | 212,877.00 | 0.00 | 0.00 | ☑ | 42,575.40 |
| 7003 | Փոշեկուլ SAMSUN... | 001 | հատ | 20.000 | 53.00 | 1,060.00 | 429,808.80 | 0.00 | 0.00 | ☑ | 85,961.76 |
| 3028 | Օպտիկ. դիսկակի... | 014 | արկղ | 2.000 | 108.00 | 216.00 | 87,583.68 | 0.00 | 0.00 | ☑ | 17,516.74 |
| 2001 | Թվային ֆոտոխցի... | 001 | հատ | 4.000 | 325.00 | 1,300.00 | 527,124.00 | 0.00 | 0.00 | ☑ | 105,424.80 |
| 1010 | MP3/MP4 նվագար... | 001 | հատ | 5.000 | 18.00 | 90.00 | 36,493.20 | 0.00 | 0.00 | ☑ | 7,298.64 |
| 1011 | MP3/MP4 նվագար... | 001 | հատ | 5.000 | 25.00 | 125.00 | 50,685.00 | 0.00 | 0.00 | ☑ | 10,137.00 |
| | | | | 137.000 | | 34,600.00 | 14,029,608.00 | | 0.00 | | 2,805,921.60 |

Մաքսատուրքի դրույքաչափն ունենալու դեպքում ***Տոկոս*** դաշտում լրացնել տոկոսը, կհաշվարկվի մաքսատուրքը և կձևավորվի ԱԱՀ հաշվարկման բազան:

- Սեղմել ***Հիշել և փակել***:

## Պահեստի մուտքի օրդեր

Առաջադրանք:

16.01.24թ. համաձայն Inv01020304 հաշիվ-ապրանքագրի (SAMSUNG)Սամսունգ-ից գնել ենք հետևյալ ապրանքերը: Մուտքագրել ապրանքները կենտրոնական պահեստ:

***Ընդհանուր*** էջում լրացնել համապատասխան դաշտերը.




*Ապրանքների ցուցակ* էջում լրացնել հետևյալ ապրանքները.




- Սեղմել *Հիշել և փակել*։

## Վճարման հանձնարարագիր

**Վճարման հանձնարարագիրը** կազմակերպության կողմից բանկին տրվող հանձնարարագիր է՝ իր հաշվարկային հաշվից համապատասխան գումարը ստացողի հաշվարկային հաշվին փոխանցելու մասին:

Առաջադրանք:

22.01.24թ. կատարել վճարում Գալատեա ՍՊԸ-ին ստացված ապրանքների դիմաց:

- Վերադառնալ ***Գնումներ ենթահամակարգ - Մատյաններ-Բոլոր փաստաթղթերը***




- ***Ժամանակահատված*** - 01.01.24-31.12.24թ.




- Ավելացնել նոր փաստաթուղթ՝ **Վճարման հանձնարարագիր:** Փաստաթուղթն ունի հետևյալ տեսքը.




Փակենք փաստաթուղթը և այն փորձենք լրացնել ՊՄՕ հիման վրա: Դրա համար.

- Սեղմել ***Փոխել պարամետրերը*** կոճակը.




- Դիալոգ պատուհանում ***Ժամանակահատված*** – թողնել նույնը՝ 01.01.24 – 31.12.24
- Տեսակ - ***Պահեստի մուտքի օրդեր***



Փաստաթղթերի մատյան 01/01/24 - 31/12/24

| Ամսաթիվ | Օրվա... | Փաստաթղթ... | Տեսակ | Արժույթ | Գումար | Վիճակ | Պահեստ | Տեղեկություն | Մեկնաբանություն | Գործընկեր | Գործընկերոջ անվանում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12/01/24 | 0 | 0001 | Պահեստի մուտք | AMD | 11,835,660.00 | Գրանցված | Կենտրոնական պահեստ | Գալատեա ՍՊԸ | Համակարգչային ապրանքների ձեռքբերում | 0001 | Գալատեա ՍՊԸ |
| 16/01/24 | 10 | 0002 | Պահեստի մուտք | USD | 17,224.80 | Գրանցված | Կենտրոնական պահեստ | SAMSUNG | Ապրանքների ձեռքբերում | 0004 | SAMSUNG |

Տեսնում ենք, որ 12.01.24թ.-ին Գալատեա ՍՊԸ-ից ստացել են ապրանքներ, այսինքն այդ փաստաթղթի հիման վրա կարող ենք մատակարարին վճարում կատարել:

- Ընտրել Գալատեա ՍՊԸ-ից ձեռքբերած ապրանքների փաստաթուղթը
- Փաստաթղթի կոնտեքստային ցանկից ընտրել ***Ստեղծել փաստաթղթի հիման վրա...***
- Ընտրել ***Վճարման հանձնարարագիր*** փաստաթուղթը




- Եթե չենք պատրաստվում գումարը վճարել ամբողջությամբ, ապա կարող ենք խմբագրել ***Գումար արժույթով*** դաշտը՝ նշելով այն գումարը, որը կարող ենք վճարել այդ պահին: Նշել, օրինակ՝ 9,835,660.00 դրամ:
- Սեղմել ***Հիշել:*** Երբ ունենք արդեն ստեղծված փաստաթուղթը, այն կարող ենք տպել՝ ընտրելով տպման տեսքը, կարող ենք արտահանել Excel կամ Word և այլն:
- Սեղմել ***Հիշել և փակել*** փաստաթուղթը:

## Բանկի ելք

Բանկի կողմից հաստատված ելքի գործարքները համակարգում արտացոլելու համար կարելի է օգտագործել նաև ***Բանկի ելք*** փաստաթուղթը:

Առաջադրանք:

23.01.24թ. ձևակերպել ելքը հաշվարկային հաշվից: Վճարում Գալատեա ՍՊԸ-ին՝ 2,000,000 դրամ:




- Սեղմել *Հիշել և փակել*:

**Ապրանքների տեղաշարժ**

**Ապրանքների տեղաշարժ** փաստաթուղթը նախատեսված է կազմակերպության մի պահեստից մյուսը ապրանքների տեղափոխումը գրանցելու համար: Երբ ապրանքները տեղափոխվում են մանրածախ պահեստ, առաջանում է պահանջ նշել վաճառքի գները: Փաստաթղթում ֆիքսված գները հետագայում հանդիսանալու են հիմք՝ մանրածախ պահեստում վաճառքի և հաշվառման համար: Վաճառքներ գրանցելիս այս գները փոփոխել չի թույլատրվում: Վաճառքի գների փոփոխություն կատարելու համար նախատեսված է Ապրանքների վերագնահատում (Մանրածախ) փաստաթուղթը: Երբ ապրանքները տեղափոխվում են մանրածախ պահեստից, համակարգն ավտոմատ լրացնում է տվյալ պահեստում տվյալ ապրանքի համար սահմանված վաճառքի գինը: Եթե տվյալ ապրանքի համար պահեստում սահմանված են մի քանի վաճառքի գներ, ապա օգտագործողը կարող է ընտրել դրանցից որևէ մեկը: Համակարգն ավտոմատ լրացնում է սահմանված գներից փոքրագույնը:
Առաջադրանք:
17.01.24թ. Կենտրոնական պահեստից ստորև նշված ապրանքները տեղափոխել համակարգիչների հավաքման բաժին 2 համակարգիչ հավաքելու համար:

- **Ամսաթիվ**-17.01.24թ.
- **Փաստաթղթի N**-0001
- **Պահեստ ելքի**- Կենտրոնական պահեստ
- **Պահեստ մուտքի**- Համակարգիչների հավաքման բաժին
- **Գծիկավոր կոդ**-կարող եք գրել կամ սկաներով կարդալ
- **Մեկնաբանություն**- Տեղաշարժ Համակարգիչների հավաքման բաժին
- Լրացնել ցուցակը.
- Մուտքագրել 3009 կոդով ապրանքը, քանակը՝ 2 հատ, ***Խմբաքանակ*** սյան մեջ, որտեղ գրված է ***Ավտոընտրություն***, սեղմել աջ մասի բազմակետի վրա.




- բացվեց *Ելքի սպեցիֆիկացիա* պատուհանը.




Այստեղ երևում է ըստ խմբաքանակների ապրանքի առկա քանակությունը ելքագրվող պահեստում, հաշվառման գինը, ինչպես նաև ձեռքբերման և պահեստ մուտքագրման ամսաթիվը: Եթե ապրանքի ելքագրումը կատարվում է ավտոընտրությունով, ապա ապրանքի ելքագրումը իրականացվում է կախված հաշվառման մեթոդից: Այսպես, եթե հաշվառման մեթոդը ընտրված է, օրինակ՝ ՖԻՖՈ, ապա առաջին ելքագրումը կկատարվի առաջին մուտքի խմբաքանակից: Համակարգը հնարավորություն է տալիս ելքագրել ապրանքը անհրաժեշտ քանակով ցանկացած խմբաքանակներից: Մեր օրինակում թողնել ***Ավտոընտրություն***:

Լրացնել ապրանքները ստորև նշված օրինակով.




- ***Հիշել և փակել***

Փաստաթուղթը կարելի է տպել, հարկային նպատակներով արտահանել XML և այլն:

- Տեղափոխվել ***Պահեստ ենթահամակարգ***
- Մատյաններից կանչել ***Տեղափոխման փաստաթղթերը***
- Ընտրել ժամանակահատված- 01.01.24-31.12.24թ.




- Կատարել



- Տեսնում ենք մեր ստեղծած տեղաշարժի փաստաթուղթը
- Ընթացիկ տողի կոնտեքստային ցանկից ընտրել ***Տեղաշարժի փաստաթղթերի արտահանում e-Invoicing*** հրամանը և տվյալները ներմուծել e-Invoicing համակարգ:
- Փաստաթղթերը ներմուծելուց և էլեկտրոնային ստորագրություն դնելուց հետո, դրանց վերագրվում են սերիա-համարներ, որոնք հնարավորություն ունենք ներմուծել մեր համակարգ:




- Գործողություններից ընտրել ***Սերիա-համարների վերագրում*** գործողությունը:

Այս հրամանի միջոցով e-Invoicing համակարգի միջոցով (էլեկտրոնային եղանակով) դուրս գրված տեղափոխման փաստաթղթերի սերիա-համարները վերագրվում են համապատասխան տեղաշարժի փաստաթղթերին:Այս հրամանով բացվում է պատուհան, որտեղ անհրաժեշտ է նշել e-Invoicing համակարգից XML ֆորմատով արտահանված ֆայլը:




Տեղի է ունենում հարկային հաշվի նույնականացում ըստ տեղափոխման փաստաթղթի ամսաթվի, տողերի քանակի և ընդհանուր քանակի: Ավելի հարմար է օգտագործել նույնացուցիչով նույնականացում, որի պարագայում ծրագիրը գեներացնում է ունիկալ կոդ՝ ***Նույնացուցիչ***, որը գրվում է ***Մեկնաբանություն*** դաշտում: Եվ այդ նույնացուցիչի օգնությամբ էլ իրականացվում է համապատասխանեցումը, և ճշգրիտ վերագրվում են սերիա-համարները:

- Այդ գործողությունից հետո տեղաշարժի փաստաթղթին կվերագրվի իր սերիա-համարը և ***Տեղափոխման փաստաթղթերի մատյանում*** **Սերիա և համար** սյունը կլինի լրացված:

**Կոմպլեկտավորում**

---

Կոմպլեկտավորում փաստաթուղթը նախատեսված է ապրանքների պարզ արտադրության (հավաքման) համար: Այս գործողության արդյունքում պահեստ են մուտքագրվում տրված քանակությամբ ապրանքներ (կոմպլեկտ) և ելքագրվում են որոշ քանակությամբ ապրանքներ (կոմպլեկտի բաղադրամասեր): Կոմպլեկտավորում կատարելուց առաջ անհրաժեշտ է նկարագրել կոմպլեկտը:

Առաջադրանք:

Կատարել 3001 կոդով համակարգչի հավաքում: Այդ նպատակով.
Մուտք գործել Պահեստ ենթահամակարգ - Տեղեկատուներ – Ապրանքներ և ծառայություններ
Նկարագրել, թե ինչ մասերից է այն բաղկացած: Այդ տողի կոնտեքստային ցանկից ընտրել ***Կոմպլեկտի բաղադրամասեր***:



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ապրանք | 2002 | Թվային ֆոտոխցիկ Canon IXUS 125HS green | | 210 | Թվային ֆոտոխց... | հատ |
| Ապրանք | 2003 | Տեսախցիկ Panasonic HDC-HS9EE-S | | 220 | Տեսախցիկներ | հատ |
| Ապրանք | 2004 | Տեսախցիկ SONY HDR-CX560E/B | | 220 | Տեսախցիկներ | հատ |
| Ապրանք | 3001 | Համակարգիչ Office INTEL Core i3-4330/4GB/... | | 310 | Համակարգիչներ | Լոմ... |
| Ապրանք | 3002 | Համակարգիչ Pro INTEL Core i5-4570/8GB/1T... | | | | |
| Ապրանք | 3003 | Նոութբուք SONY VAIO SVF1521P1RW i5 3337... | | | | |
| Ապրանք | 3004 | Նոութբուք SAMSUNG 670Z5E NP670Z5E-X01 i... | | | | |
| Ապրանք | 3005 | Պլանշետ SONY Xperia Tablet Z SGP312RU/W... | | | | |
| Ապրանք | 3006 | Պլանշետ SAMSUNG Galaxy Tab Pro SM-T320-... | | | | |
| Ապրանք | 3007 | Մոնիտոր LED SAMSUNG 20" SyncMaster T20A... | | | | |
| Ապրանք | 3008 | Մոնիտոր LED SAMSUNG 24" SyncMaster SA300 | | | | |
| Ապրանք | 3009 | Քայս MERCURY KM-81 | | | | |
| Ապրանք | 3010 | Քայս ASUS TA-8 | | | | |
| Ապրանք | 3011 | Մուկ Genius NetScroll 6000 Wireless, Optical, U... | | | | |
| Ապրանք | 3012 | Մուկ Genius Netscroll 120, Laser, USB | | | | |
| Ապրանք | 3013 | Ստեղնաշար Genius Slimstar I815, Wireless, U... | | | | |
| Ապրանք | 3014 | Ստեղնաշար Genius KB-110, USB | | | | |
| Ապրանք | 3015 | Ստեղնաշար Genius KB-06X, BLACK, PS/2 | | | | |



Ցանկը դատարկ է: 

կոճակով ավելացնել հետևյալ բաղադրամասերը.



Կոմպլեկտի բաղադրամասեր, 3001 - Համակարգիչ Office INTEL Core i3-4330/4GB/500GB

| Տեսակ | Կոդ | Անվանում | Չափման միավոր | Քանակ | Կոմպլեկտի քանակ | Գնի մաս | Գումար |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ապրանք | 3009 | Քայս MERCURY KM-81 | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |
| Ապրանք | 3011 | Մուկ Genius NetScroll 6000 Wireless, Optical, USB | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |
| Ապրանք | 3013 | Ստեղնաշար Genius Slimstar I815, Wireless, USB | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |
| Ապրանք | 3017 | Պրոցեսոր Intel Core i5-3470 3.2 GHz | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |
| Ապրանք | 3019 | Հիշողություն Kingston DDR3 2Gb 1333MHz | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |
| Ապրանք | 3021 | Մայրպլատա Asus H87M-E | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |
| Ապրանք | 3024 | Կոշտ սկավառակ SAMSUNG 500Gb SATA 5400rpm | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |
| Ապրանք | 3027 | Օպտիկ. դիսկավիր SAMSUNG SH-S223 DVD+/-RW SATA | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |
| Ապրանք | 3030 | Վիդեո քարտ Sapphire HD 7850 1Gb GDDR5 256bit | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |
| Ապրանք | 3033 | Ֆլեշ հիշողություն PQI Pen Drive 16GB, U339 | հատ | 1.000000 | 1.000 | 0.000 | 0.00 |

Այնուհետև ***Կոմպլեկտավորում*** փաստաթղթի միջոցով 17.01.24թ. Համակարգիչների հավաքման բաժնում կոմպլեկտավորել 2 հատ 3001 կոդով համակարգիչ: Մեկնաբանությունում նշել՝ 2 համակարգչի կոմպլեկտավորում:
Սեղմել ***Լրացնել*** կոճակը: Նկարագրված բաղադրամասերը կլրացվեն:




- Սեղմել **Հիշել և փակել**:

## Վաճառքներ ենթահամակարգ

- Տեղափոխվել ***Վաճառքներ ենթահամակարգ***:
- **Ամսաթվեր** գործիքում սահմանել ժամանակահատվածը՝ 01.01.24-31.12.24թ.:




## Փաստաթղթեր

### Հաշիվ-Ապրանքագիր

**Վաճառք (Հաշիվ-Ապրանքագիր)** փաստաթուղթը նախատեսված է պահեստներից վաճառքների իրականացման համար:

Առաջադրանք:

23.01.24թ. դուրս գրել Պարադիզ ՍՊԸ-ին վաճառքի Հաշիվ-Ապրանքագիր Ա0935658741: Մուտք գործել ***Փաստաթղթեր***, բացել ***Վաճառք (Հաշիվ – Ապրանքագիր)*** փաստաթուղթը

**Ընդհանուր** էջում լրացնել.

- **Խումբ** – Գնորդներ
- **Գնորդ** – Պարադիզ ՍՊԸ
- **Պայմանագիր** – Հիմնական
- Դուրս գրման եղանակ - Էլեկտրոնային
- **Վաճառող** - + - ով ավելացնել նոր աշխատակից՝ նշելով վաճառող դաշտը







- Անցնել երկրորդ էջ՝ ***Անվանացուցակ***
-  նշանով ավելացնել ապրանքները.
- **Տեսակ**- Ապրանք
- **Պահեստ**- Կենտրոնական պահեստը,
- **Կոդ**-1001
- **Քանակ**-1
- **Գին**-տվյալ հեռուստացույցի համար **Գներ** տեղեկատուում արդեն սահմանել ենք մեծածախ գինը, այդ պատճառով համակարգը առաջարկում է
- **ԱԱՀ-ի հաշվարկի ձև** - ԱԱՀ-ով




- Ավելացնել ևս մեկ ապրանք.
- **Կոդ**-1002
- **Քանակ**-1




- Անվանացուցակը լրացնելուց հետո ներքևում երևում է **Ընդհանուր գումարը**, և քանի որ վաճառքը ԱԱՀ-ով է, երևում է նաև ԱԱՀ-ի գումարը առանձին դաշտում:

**Մատակարար** էջում լրացված են մեր բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են հաշիվ-ապրանքագրում արտացոլելու համար: Գործունեության հասցեն առաջարկվում է **Դրույթներում** նշված հիմնական գործունեության հասցեն, որը կարելի է խմբագրել և նշել, օրինակ՝ այն պահեստի հասցեն, որտեղից ելքագրվում են ապրանքները: Առաջարկվող հիմնական հաշվարկային հաշիվը նույնպես կարելի է փոխել:




**Գնորդ** էջում լրացված են գնորդի տվյալները:




Սեղմել **Հիշել**: Փաստաթուղթը գնորդին կարելի է ներկայացնել թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

Էլեկտրոնային տեսքով ներկայացնելու համար փաստաթուղթը կարտահանենք XML և կներմուծենք e-Invoicing համակարգ:
Այս փաստաթղթում հնարավոր է նաև **Անվանացուցակը** լրացնել ապրանքների ցուցակի ներմուծման ճանապարհով.

- **Այլ** ներդիրից **Ապրանքների ցուցակի ներմուծում** հրամանը կանչելով:




- Սեղմել **Հիշել և փակել** փաստաթուղթը:

Հաշիվ-Ապրանքագրի հիման վրա հնարավոր է ստեղծել 3 տեսակի փաստաթուղթ.

- Մուտք գործել ***Մատյաններ – Վաճառքի փաստաթղթեր***
- Ընթացիկ տողը՝ ***Վաճառք (Հաշիվ-Ապրանքագիր)*** փաստաթուղթը
- Կոնտեքստային ցանկից ընտրել ***Ստեղծել փաստաթղթի հիման վրա…*** հրամանը




- Առաջարկում է ***Դրամարկղի մուտքի օրդեր, Բանկի մուտք, Վերադարձ գնորդից*** փաստաթղթերը: Եթե գնորդը վճարում է ոչ թե նախապես, այլ հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո, ստեղծում ենք ***Դրամարկղի մուտքի օրդեր***՝ կանխիկ վճարման դեպքում, և ***Բանկի մուտք***՝ անկանխիկ վճարման դեպքում: Եթե գնորդը վերադարձնում է ապրանքը, ստեղծում ենք ***Վերադարձ գնորդից*** փաստաթուղթը:

## Վերադարձ գնորդից

**Վերադարձ գնորդից** փաստաթղթի միջոցով իրականացվում է վաճառված ապրանքների վերադարձ կազմակերպություն:
Վերադարձը կարելի է ձևավորել նախկինում գրանցված վաճառքի հիման վրա: Ապրանքների ցուցակը լրացվում է բոլոր վաճառված ապրանքներով, և ցուցակում անհրաժեշտ է թողնել միայն վերադարձվող ապրանքները (օրինակ՝ վնասված կամ որակին չհամապատասխանող):
Համակարգը, հիմնվելով վաճառքի փաստաթղթի վրա, որոշում է վերադարձվող ապրանքների խմբաքանակը և նշված պահեստ է մուտքագրվում այն ինքնարժեքով, որ խմբաքանակից ելքագրվել են:
Եթե նշվում է գնորդը, ապա վերադարձվող գումարի չափով նվազում է գնորդի պարտքը կազմակերպության հանդեպ:
Այն դեպքում, երբ վերադարձը գրանցելիս չի նշվում հիմք-փաստաթուղթը, օգտագործողը ինքնուրույն պետք է մուտքագրի վերադարձվող ապրանքները՝ նշելով քանակը, վաճառքի գինը և գումարը, ինքնարժեքը և խմբաքանակի այլ հատկությունները:
Առաջադրանք:
25.01.24թ.ին Պարադիզ ՍՊԸ-ն կատարել է 1002 կոդով ապրանքի վերադարձ, համաձայն 23.01.24թ. կատարված վաճառք Հաշիվ-Ապրանքագրի Ա0935658741 հիման վրա:

- Վերը նշված քայլերի հերթականությամբ *23.01.24թ.Վաճառք (Հաշիվ-Ապրանքագրի)* հիման վրա լրացնել ***Վերադարձ գնորդից*** փաստաթուղթը: Ամբողջ փաստաթուղթը լրացված է հիմք փաստաթղթի տվյալներով:




- Անցնել ***Ապրանքների ցուցակ*** էջ:
- Քանի որ մեր օրինակում ոչ բոլոր ապրանքներն են վերադարձվում, ապա հեռացնել առաջին տողը և թողնել միայն երկրորդը՝ վերադարձվող ապրանքը:




- Եթե սեղմենք **Հիշել** փաստաթուղթը և դիտենք տպման տեսքը, ապա կտեսնենք **Պահեստի մուտքի օրդերի** տեսքով փաստաթուղթ, այսինքն վերադարձի դեպքում ապրանքը մուտքագրվում է այն պահեստ, որտեղից վաճառվել էր:
- Սեղմել **Հիշել և փակել**:

# Մատյաններ

## Հարկային հաշիվներ

- Մատյաններ բաժնից բացել *Հարկային հաշիվները*
- Ժամանակահատվածը նշված է
- Սեղմել **Կատարել**
  Այստեղ երևում են մեր ստեղծած *Հաշիվ-Ապրանքագիր* և *Վերադարձ գնորդից* փաստաթղթերը: Փաստաթղթերը կարելի է միանգամից արտահանել e-Invoicing համակարգ:




- Փակել *Հարկային հաշիվներ* մատյանը:

# Ադմինիստրատորի գործիքներ ենթահամակարգ

## Օգտագործողներ

Տեղափոխվել *Ադմինիստրատորի գործիքներ* ենթահամակարգ:




- Ընտրել *Ադմինիստրատորի գործիքներ - Օգտագործողներ*

Մենք մուտք ենք գործել **Admin** օգտագործողի կարգավիճակով:

- Տողի վրայից բացել կոնտեքստային ցանկը
- Ընտրել **Պահեստների դրույթներ**

Այստեղ տեսնում ենք մեր նկարագրած պահեստները:







Պահեստների դրույթներ հրամանով բացվող պատուհանում կարելի է սահմանել տվյալ օգտագործողի՝ կազմակերպությունում գոյություն ունեցող պահեստների հետ աշխատելու իրավասությունները:

Եթե պահեստի դիմաց նշված է **Հասանելի է** հայտանիշը, ապա օգտագործողն իրավասություն ունի այդ պահեստ ապրանքների մուտքեր և ելքեր գրանցել: Եթե հայտանիշը նշված չէ, ապա օգտագործողը չի կարող այդ պահեստ ապրանքներ մուտքագրել կամ ելքագրել: Եթե նշված է նաև **Թույլատրել առկայությունից ավելի ելքագրում** հայտանիշը, ապա օգտագործողն իրավասություն ունի այդ պահեստից ելքագրել եղած քանակությունից ավել: ***Ապրանքների տեղաշարժ, Կոմպլեկտավորում և Ապակոմպլեկտավորում*** փաստաթղթերում պահեստի հասանելիությունը ստուգվում է միայն ելքի պահեստի համար: Ադմինիստրատորին հասանելի են բոլոր պահեստները:

- Admin օգտագործողի տողի վրայից բացել կոնտեքստային ցանկը
- Ընտրել **Փաստաթղթերի դրույթներ**




Փաստաթղթերի դրույթներ հրամանով բացվում է պատուհան, որն ունի հետևյալ էջերը՝ Ընդհանուր, Աշխատանքի սահմանափակումներ, Վաճառք (Կտրոն) և Վաճառակետ (POS):
Ընդհանուր էջում առանձնացված են երկու բաժիններ՝ Լռությամբ արժեքներ և կարգավորումներ:
Փաստաթուղթ մուտքագրելիս տվյալ օգտագործողին առաջարկվում են Լռությամբ արժեքները:
Օրինակ՝ ***Պահեստի մուտքի օրդեր*** փաստաթուղթը լրացնելուց **Պահեստ**, **Մատակարար** և **Գների տեսակներ** դաշտերը լրացվում են համապատասխան դաշտերի արժեքներով:




Անցնենք երկրորդ էջ՝ Աշխատանքի սահմանափակումներ:




Այստեղից կարող ենք նշել **Օգտագործել ընթացիկ ամսաթիվը**, որի դեպքում վաճառքները կարող ենք ձևակերպել միայն ընթացիկ ամսաթվով: Կարող ենք սահմանափակել **աշխատանքային ժամանակահատվածը**: **Թույլ տալ խմբագրել վաճառքի գինը, զեղչված գինը** դրոշակները դնելու դեպքում վաճառքի ժամանակ ապրանքի առաջարկվող գինը կարող է փոփոխվել օգտագործողի կողմից, հակառակ դեպքում այդ գինը փոփոխման ենթակա չի լինի: **Թույլ տալ խմբագրել գնի տեսակը** դրոշակը նշված լինելու դեպքում օգտագործողը կարող է խմբագրել Գնի տեսակը *Վաճառք (Հաշիվ-Ապրանքագիր)* և *Վաճառք (Կտրոն)* փաստաթղթերում: **Թույլ տալ խմբագրել զեղչի գնի տեսակը** դրոշակը նշված լինելու դեպքում օգտագործողը կարող է խմբագրել Զեղչի գնի տեսակը Վաճառք (Կտրոն) փաստաթղթում: Այս կարգավորումը ցուցադրվում է Աշխատանքի սահմանափակումներում, եթե *Դրույթների Ընդհանուր* էջում նշված է **Վաճառքի ժամանակ թույլատրել օգտագործել զեղչ** դրոշակը:**Վաճառքը գրանցելիս զեղչել ավտոմատ** հայտանիշը նշված լինելու դեպքում օգտագործողը չի կարող վաճառքի ժամանակ գրել զեղչի տոկոս, այն կհաշվարկվի Զեղչեր տեղեկատուում նկարագրված զեղչային մեխանիզմից: Եթե զեղչային մեխանիզմ չկա, և զեղչը անվանական է, վերաբերվում է կոնկրետ վաճառքին, անջատում ենք այս հայտանիշը՝ հնարավորություն տալով վաճառողին մուտքագրել զեղչը: **Ցույց տալ ապրանքների ինքնարժեքների գումարները** հայտանիշը նշված լինելու դեպքում Օգտագործողին հասանելի կլինի ապրանքների ինքնարժեքները տեսնելու հնարավորությունը: **Վաճառք գրանցելուց թույլ տալ գերազանցել պարտքի սահմանաչափը** հայտանիշը նշված լինելու դեպքում Վաճառքի փաստաթղթերում, եթե գնորդի պարտքը գերազանցում է իր պայմանագրի վրա նշված գումարը, ապա փաստաթուղթը գրանցելիս բերվում է հաղորդագրություն, և Օգտագործողը կարող է գերազանցել այս գումարի սահմանաչափը: Երրորդը՝ **Վաճառք (Կտրոն)** էջն է:




Այս էջից կարգավորվում է *Վաճառք (Կտրոն)* և *Վերադարձ (Կտրոն)* փաստաթղթերի աշխատանքը: **ՀԴՄ կտրոնի կարգավորում** բաժնում ունենք **Տպել և նոր** հայտանիշը, եթե հայտանիշը նշված է, ապա ՀԴՄ կտրոն տպելուց հետո փաստաթուղթը փակվում է և բացվում է նոր վաճառքի պատուհան:




ՀԴՄ կտրոնում Զեղչի տեսակ կարող ենք ընտրել հետևյալ տարբերակներից որևէ մեկը. 1 – *%-ային ապրանքի մեկ միավորի վրա*, 2 – *Դրամային ապրանքի մեկ միավորի վրա*, 3 - *Դրամային ապրանքի ընդհանուր քանակի վրա*: **Որպես տողի կոդ** կարելի է տպել հետևյալ տարբերակներից որևէ մեկը. 1-*Կոդ*, 2-*Խմբի կոդ*, 3-*Արտաքին կոդ*: Շահագործման ընթացքում խորհուրդ չի տրվում փոխել տողի տպելու դրույթը: Այստեղ կարող ենք ընտրել նաև, թե ՀԴՄ կտրոնի վրա **որպես տողի անվանում** հետևյալ տարբերակներից մեկը` 1 - *ապրանքի անվանումը*, 2 - *լրիվ անվանումը*, 3 - *բնութագիրը*, 4 - *խմբի անվանումը*, 5 - *ԱԴԳՏ/ԱՏԳԱԱ դասակարգչի անվանումը*:

*Վաճառք (Կտրոն)* էջում կան նաև այլ սահմանափակումներ. Դաշտերի  արժեքներ` խմբագրվող և չխմբագրվող, սյուներ և հրամանների լռությամբ արժեքներ` ցուցադրվող և չցուցադրվող:

**Վաճառակետ (POS)** էջը նախատեսված է Վաճառակետ (POS) ենթահամակարգի *Վաճառք* փաստաթղթում օգտագործողի իրավասությունները սահմանելու համար: Էջի տեսքը հետևյալն է.




Այս ողջ տեղեկատվությունը հասանելի է նաև օգնություն բաժնում. սեղմենք F1 և բացված էջում ընտրելով Ադմինիստրատորի գործիքների **Օգտագործողներ** բաժինը՝ կստանանք մանրամասն տեղեկություն սահմանափակումների սահմանման, դաշտերի նշանակությունների մասին:

Ադմինիստրատորի իրավասություն ունեցող օգտագործողն է կատարում նաև համակարգին կցվող սարքավորումների կարգավորումները: Սարքավորումների կարգավորումները իրականացվում են Դրույթների Սարքավորումներ բաժնում:




*Սկաների պարամետրեր* բաժնում կարելի է կարգավորել գծիկավոր կոդ (bar code) կարդացող սկաների աշխատանքը: Եթե նշված է "Scaner On" դրոշակը, ապա ՀԾ-Առևտուր համակարգը հասկանում է, որ համակարգչին միացված է սկաներ: "COM Port" դաշտում նշվում է հաջորդական պորտը, որին միացված է սկաները: "Baud Rate", "Data Bits", "Parity", և "Stop Bits" դաշտերում նշվում են սկաների աշխատանքի այլ պարամետրեր:
*Մագնիսական քարտ կարդացող սարքի պարամետրեր* բաժնում նշվում են տվյալ սարքի հետ կապված կարգավորումները:

*Կտրոնի տպիչ* բաժնում կարգավորվում է կտրոն տպող թերմոտպիչի աշխատանքը: Ցուցակում համակարգչին հասանելի տպիչների ցանկից նշվում է թերմոտպիչը:
*Պիտակի տպիչ* բաժնում կարգավորվում է պիտակ տպող թերմոտպիչի աշխատանքը: Ցուցակում համակարգչին հասանելի տպիչների ցանկից նշվում է թերմոտպիչը:
*Հաճախորդի էկրանի պարամետրեր* բաժնում կարգավորվում է հաճախորդի համար առանձնացված էկրանի պարամետրերը: Նշվում է համակարգչին միացված լրացուցիչ մոնիտորը: Ըստ ցանկության լրացվում են Գլխագիր դաշտը, Ապրանքի նկար, Ֆոն դրոշակները:
*Էլ. կշեռքի պարամետրեր* բաժնում կարգավորվում է էլեկտրոնային կշեռքի հետ աշխատանքը:
Համակարգը համակցվում է նաև ՀԴՄ սարքի հետ: ՀԴՄ սարքի հետ համակցման կարգավորումները նույնպես կատարվում են Ադմինիստրատորի իրավասություն ունեցող օգտագործողի կողմից:
Կարգավորումները կատարվում են Դրամարկղեր տեղեկատուից:




- **ՀԴՄ** -Դրոշակը նշված լինելու դեպքում տվյալ դրամարկղը կառաջարկվի ՀԴՄ կտրոններ մատյանի դիալոգ պատուհանի Դրամարկղ (ՀԴՄ) ցուցակում:
- **ՀԴՄ սարքի համար** - Նշվում է հարկային մարմնում ՀԴՄ սարքի համարը:
- **ՀԴՄ գրանցման N** - Նշվում է հարկային մարմնում ՀԴՄ սարքի գրանցման համարը:
- **IP հասցե -** ՀԴՄ-ի IP հասցեն է, որի միջոցով համակարգը միանալու է ՀԴՄ-ին:
- **Պորտ**- ՀԴՄ-ի պորտի համարն է, որի միջոցով համակարգը միանալու է ՀԴՄ-ին:
- **Գաղտնաբառ** - Գաղտնաբառ, որի միջոցով համակարգը միանալու է ՀԴՄ-ին:
- **ԱԱՀ-ով հարկվող ՀԴՄ բաժին** - Նշվում է օպերատորին կցված բաժինը, որը հարկվում է ԱԱՀ-ով:
- **ԱԱՀ-ով չհարկվող ՀԴՄ բաժին** - Նշվում է օպերատորին կցված բաժինը, որը չի հարկվում ԱԱՀ-ով:
- **Կանխիկի սահմանաչափ** - Պարտադիր լրացվող դաշտ է, սահմանափակումը հաշվի է առնվում ՀԴՄ կտրոն տպելիս: Դաշտը կարող է ընդունել հետևյալ արժեքները՝
  **1- 0 դրամ (բոլոր վճարումները միայն անկանխիկ)** արժեքը ընտրելու դեպքում կիրառվում է

սահմանափակում բոլոր կանխիկ գործարքների համար,
**2- 300.000 դրամ** արժեքը ընտրելու դեպքում կիրառվում է սահմանափակում 300.000դր և ավելի կանխիկ գործարքների համար,
**3- Սահմանաչափ չի գործում** արժեքը ընտրելու դեպքում որևէ սահմանափակում չի կիրառվում:

- **Ցույց տալ տպելու գործընթացը -** Դրոշակը նշված լինելու դեպքում հնարավոր կլինի Վաճառք (կտրոն) փաստաթղթում հետևել ՀԴՄ կտրոն տպելու գործընթացին և անհրաժեշտության դեպքում դադարեցնել գործընթացը:

Դրամարկղեր տեղեկատուից է կատարվում նաև դրամարկղին կցված POS-տերմինալների կարգավորումները:




- **Անվանում** - Նշվում է POS-տերմինալի անվանումը: Հաջորդ՝ Գործընկեր դաշտը լրացնելու դեպքում, դաշտում ավտոմատ կլրացվի գործընկերոջ անվանումը: Դաշտը խմբագրման ենթակա է:
- **Գործընկեր** - Լրացվում է POS-տերմինալը տրամադրող բանկ-գործընկերը:
- **Պայմանագիր** -Նշվում է POS-տերմինալը տրամադրող բանկ-գործընկերոջ պայմանագիրը:
- **Միացված սարք** -Ընտրվում է դրամարկղին միացված՝ համակարգի հետ համակցվող սարքերից որևէ մեկը (ՀԴՄ-ի POS-տերմինալ, Ingenico POS): Այլ տեսակի սարքի դեպքում դաշտի արժեքը անհրաժեշտ է թողնել դատարկ:
- **ՀԴՄ Վճարային համակարգ** -Դաշտն ակտիվանում է Միացված սարք դաշտում ՀԴՄ-ի POS-տերմինալ նշված լինելու դեպքում: Կից բացվող ցուցակից կարելի է ընտրել քարտային կամ վճարային համակարգերով վճարման տարբերակը:

Այժմ փորձենք ավելացնել **Օգտագործող**.

- Կոնտեքստային ցանկից ընտրել **Ավելացնել**




- **Օգտագործողի անուն**- USER, անհրաժեշտ է գրել լատինատառ
- **Օգտագործողի նկարագրություն**- Առևտրի սրահի վաճառող,
- Գաղտնաբառ - դնենք 1, յուրաքանչյուր օգտագործող առաջին մուտքից հետո կարող է փոխել իր գաղտնաբառը՝ անանուն կոճակից ընտրելով **Գաղտնաբառի փոփոխություն** հրամանը




- **Ադմինիստրատոր է**- հանել հայտանիշը
- **ՀԴՄ օպերատոր, ՀԴՄ օպերատորի գաղտնաբառ**-ծրագիրը ՀԴՄ սարքին միացված լինելու դեպքում կոնկրետ օգտագործողին տալիս ենք նաև ՀԴՄ օպերատորի համար և գաղտնաբառ:




- Կատարել:

Նկարագրեցինք նոր օգտագործողին, որը սակայն ծրագրում ոչ մի գործողություն չի կարող իրականացնել:

- **Ադմինիստրատորի գործիքներ** ենթահամակարգից ընտրել **Տվյալների պահոցներ**
- Ընտրել այն տվյալների պահոցը, որտեղ աշխատում ենք՝ **TGroup00**, և տալ **Խմբագրել:**

Բացված պատուհանի ներքևի մասում երևում է մեր նոր օգտագործողը, որին պետք է տանք նշված ենթահամակարգեր մուտք գործելու իրավասություններ՝ դրոշակներ դնելով այն ենթահամակարգերի դիմաց, որտեղ նա կարող է գործողություններ կատարել:

- Հայտանիշը դնել **Վաճառքների** և **Վաճառքներ**(**POS**)-ի դիմաց




- Սեղմել **Կատարել**

Օգտագործողին կարող ենք սահմանափակել ոչ միայն ենթահամակարգերի հասանելիությամբ:

- Բացել **Ադմինիստրատորի գործիքներ- Օգտագործողներ**
- Նոր օգտագործողի տողի վրայից բացվող կոնտեքստային ցանկից ընտրել **Օգտագործողի իրավասություններ**:




Տեսնում ենք, որ այս օգտագործողին հասանելի է միայն **Վաճառքներ ենթահամակարգը**, որի մեջ էլ իր հերթին կարող ենք տալ գործողությունների կատարման սահմանափակումներ:

- Ընտրել **Օգտագործողներ**
- Տողի վրայից բացել կոնտեքստային ցանկը, ընտրել **Պահեստների դրույթներ**
- Միայն **02 և 04** պահեստի դիմաց նշված թողնել **Հասանելի է** հայտանիշը




| Պահեստ | Անվանում | Գործողության հասանելիու... | Դիտելու հասանելիու... | Թույլատրել առկայությունից ավելի ելքագրում | Վաճառելուց գրանցել 0 ինքնարժեք |
|---|---|---|---|---|---|
| 01 | Կենտրոնական պա... | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 02 | Առևտրի սրահ | ☑ | ☑ | ☐ | ☐ |
| 03 | Համակարգիչների հ... | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 04 | Դալմա տոնավաճառ | ☑ | ☑ | ☐ | ☐ |

- Նորից վերադառնալ **Օգտագործողներ**
- Տողի վրայից բացել կոնտեքստային ցանկը, ընտրել **Փաստաթղթերի դրույթներ**

Լրացնել լռությամբ արժեքները.

- **Պահեստ**՝ 02-Առևտրի սրահ
- **Վաճառքի գնի տեսակ**՝ 02- Մանրածախ
- **Դրամարկղ**՝ 02-Առևտրի սրահի դրամարկղ
- **Արժույթ**՝ AMD-Հայկական դրամ
- **Վաճառող,** այս դաշտում հնարավոր է կցել աշխատակցին, որի տվյալները մուտքագրվում են **Վաճառքներ ենթահամակարգ- Տեղեկատուներ-Աշխատակիցներ** տեղեկատուում կամ այստեղից **+** -ով ավելացնել աշխատակից:







- **Աշխատանքի սահմանափակումներ** էջում նշել ժամանակահատվածը 01.01.24-31.12.24թ.
- Սեղմել **Կատարել** կոճակը
- Մուտք գործել համակարգ նոր օգտագործողի կարգավիճակով
- Աշխատանքի սկիզբ
- Օգտագործող՝ tradecashier0@gmail.com
- Գաղտնաբառ՝*******




- Սեղմել **Կատարել**

Բացվեց **Գլխավոր էջը**, որտեղ տեսնում ենք միայն **Վաճառքներ ենթահամակարգը**:




## Վաճառք (Կտրոն)

Տեղափոխվենք **Վաճառքներ ենթահամակարգ**, որի փաստաթղթերից ծանոթացանք Վաճառք (Հաշիվ-Ապրանքագիր)-ին: Այժմ տեսնենք, թե ինչպես է լրացվում **Վաճառք (Կտրոն)** փաստաթուղթը:

- Ստեղնաշարից սեղմել **F12**
- Բացվեց **Վաճառք (Կտրոն)** փաստաթուղթը
- **Ամսաթիվ-** ամսաթիվը նշել 24.01.24թ.
- **Փաստաթղթի N-** համակարգն առաջարկում է հերթական համար
- **Պահեստ**-Առևտրի սրահ
- **Դրամարկղ**-նշում ենք այն դրամարկղը, որտեղ մուտքագրվելու են ստացված գումարները: Եթե կոնկրետ վաճառող-օգտագործողի վրա դնում ենք պահեստի և դրամարկղի սահմանափակումներ, ապա կտրոնը բացելիս այդ դաշտերը բերվում է լրացված: Նշել Դրամարկղ 1 (Առևտրի սրահում)




Աջ կողմում տեսնում ենք կոճակներ՝ **Գծ.կոդ (F7)**, **Կոդ(F8)** և այլն, որոնք օգտագործվում են ապրանքային ցուցակը լրացնելու համար:

- Սեղմենք **F2**, հայտնվում ենք **Մուտքագրել արժեքը** դաշտում
- Լրացնել ապրանքի գծիկավոր կոդը՝ 6006
- Սեղմենք **F7**, ավտոմատ լրացվեց ապրանքի տողը
- Քանակը փոփոխելու համար ունենք **Քան.+** և **Քան.-** կոճակները, որոնք համապատասխանաբար ավելացնում և պակասեցնում են քանակները:
- Եթե չունենք գծիկավոր կոդ և հիշում ենք ապրանքի անվանումը կամ անվանումից ինչ-որ բառ, ապա սեղմում ենք **F9**, և անվանում դաշտում գրում ենք, օրինակ՝ «արդուկ», համակարգը առաջարկում է այն բոլոր ապրանքները, որոնց անվանումը սկսվում է «արդուկ» բառով, այս ցուցակից կարելի է ընտրություն կատարել:




- Ընտրել 7007 կոդով ապրանքը
- Մուտքագրել արժեքը դաշտում գրելով քանակը և սեղմելով **Ctrl+F9**-ը՝ բերված ապրանքի տողի **Քանակ** դաշտում լրացվում է գրված արժեքը:



Երկու ապրանքը լրացնելուց հետո վերևում երևում է **Ընդամենը** գումարը, այժմ անհրաժեշտ է մուտքագրել ստացված գումարը: Ենթադրենք վճարում են 60 000 դրամ:

- Սեղմել **F6** և գրել 60 000
- Սեղմել **Enter**, ներքևի **Մանր** դաշտում արտացոլվում է գնորդին վերադարձման ենթակա գումարը:



- Սեղմել ***Հիշել***
- Լրացուցիչ կարգավորումների իրականացմամբ կարելի է տպել նաև ՀԴՄ կտրոն (F3), ընդ որում կարգավորումները տրվում են և օգտագործողի մասով, և դրամարկղերում, որտեղ նշվում է IP հասցե, Պորտ և այլն ՀԴՄ սարքին միանալու համար
- Սեղմել ***Հիշել և փակել*** փաստաթուղթը

Կանչել ***Վաճառքի փաստաթղթեր*** մատյանը.







Այստեղ տեսնում ենք նաև ***Վերադարձ գնորդից*** փաստաթուղթը:

## Բանկի մուտք

Բանկի մուտք փաստաթուղթը օգտագործում ենք, օրինակ, բանկի քաղվածքում առկա մուտքերը ձևակերպելու համար:

Առաջադրանք:

26.01.24թ. ստացել ենք 1,500,000.00 դրամ կանխավճար Պրիմա ՍՊԸ-ից: Ձևակերպել գործարքը **Բանկի մուտք** փաստաթղթի օգնությամբ:

- **Հաշիվ**- լռությամբ առաջարկում է մեր հիմնական հաշվարկային հաշիվը
- **Ամսաթիվ**- 26.01.24թ.
- **Գումար**- 1,500.000.00 դրամ
- **Գործընկեր**- Պրիմա ՍՊԸ
- **Պայմանագիր** - Հիմնական
- **Մեկնաբանություն**- Կանխավճար:




- Սեղմել **Հիշել և փակել**:

## Դրամարկղի մուտքի օրդեր

Համակարգն հնարավորություն ունի ժառանգել տվյալները մի տեսակի փաստաթղթից մեկ այլ տեսակի փաստաթղթի մեջ: Օրինակ կարելի է ստեղծել **Դրամարկղի մուտքի օրդեր** փաստաթուղթ՝ տեղափոխելով նրա մեջ ավելի շուտ գրանցված **Վաճառք (Կտրոն)** փաստաթղթի որոշ տվյալներ:
Առաջադրանք:
23.01.24թ. գրանցված **Հաշիվ-Ապրանքագիր** փաստաթղթի հիման վրա ստեղծել **Դրամարկղի մուտքի** օրդեր:

- Բացել **Վաճառքի փաստաթղթեր** մատյանը
- Ընտրել որպես ընթացիկ տող ***Հաշիվ-Ապրանքագիր*** փաստաթուղթը, և կոնտեքստային ցանկից ընտրել **Ստեղծել փաստաթղթի հիման վրա…** հրամանը

Եթե տվյալ տեսակի փաստաթղթի հիման վրա կարելի է ստեղծել մեկից ավելի տեսակի փաստաթղթեր, ապա էկրանին կհայտնվի փաստաթղթի տեսակն ընտրելու ցուցակ: Ցուցակից անհրաժեշտ է ընտրել նոր մուտքագրվող փաստաթղթի տեսակը, որի արդյունքում կբացվի նոր մուտքագրվող փաստաթղթի պատուհանը և նրա մեջ կպատճենվեն անհրաժեշտ տվյալները հիմք-փաստաթղթից: Նոր մուտքագրվող փաստաթղթի բոլոր տվյալները ենթակա են խմբագրման:




- Սեղմել **Հիշել և փակել:**

**Դրամարկղի մուտքի օրդեր** փաստաթուղթը կարելի է օգտագործել նաև դրամական միջոցների ներքին տեղաշարժերի համար:
23.01.24թ. Վաճառք (կտրոն) փաստաթղթով վաճառքը ձևակերպելիս ստացված գումարը միանգամից մուտք է արվում առևտրի սրահի դրամարկղ, որտեղից այն ընդհանուր դրամարկղ ենք տեղափոխում դրամարկղի մուտքի օրդերի միջոցով:

- Մուտք գործել  փաստաթղթերի մատյան
- Ավելացնել ***Դրամարկղի մուտքի օրդեր*** փաստաթուղթը
- **Գործ. Տեսակը**- Գումարի մուտքագրում այլ դրամարկղից
- **Դրամարկղ**- Հիմնական դրամարկղ
- **Ամսաթիվ**- 24.01.24թ.
- **Փաստաթղթի N**-բերում է տվյալ դրամարկղի մուտքի օրդերի հերթական համարը
- **Գումար**- 59,850.00 դրամ
- **Ելքի դրամարկղ**-Առևտրի սրահի դրամարկղ

- **Վճարող**-այս դաշտը պարտադիր լրացվող է, գրենք «Առևտրի սրահ»




- **Մեկնաբանություն**-կարող ենք գրել, օրինակ, «Օրվա հասույթ»:
- Սեղմել **Հիշել և փակել**:

## Ապրանքների գույքագրում

**Ապրանքների գույքագրում** փաստաթղթի միջոցով կատարվում է մեծածախ պահեստում ապրանքների գույքագրումը:
Ապրանքների գույքագրում փաստաթուղթը նաև ծառայում է **Պաշարների գույքագրման ցուցակ ձևը** կազմելու և տպելու համար:
Առաջադրանք:
31.01.24թ. կատարենք Կենտրոնական պահեստի ապրանքների գույքագրում:

- Մուտք գործել ***Գնումներ ենթահամակարգ – Մատյաններ – Բոլոր փաստաթղթեր***
- Ավելացնել **Ապրանքների գույքագրում** փաստաթուղթը
- **Ամսաթիվ**- 31.01.24
- **Պահեստ**-ընտրել այն պահեստը, որտեղ կատարելու ենք գույքագրում՝ Կենտրոնական պահեստ
- **Մեկնաբանություն**-այստեղ կարող ենք մանրամասն նշել գույքագրմանը առնչվող ցանկացած տեղեկատվություն
- Պահեստում հաշվառված ապրանքների ցուցակի լրացման համար կարող ենք օգտվել *Լրացնել* կոճակից: Սեղմենք այն և կլրացվեն տվյալ պահեստում հաշվառված բոլոր ապրանքները: *Հաշվ. քանակ* սյան կողքին կա նաև *Փաստ. քանակ* սյունը, որտեղ անհրաժեշտ է լրացնել պահեստում առկա ապրանքների փաստացի քանակությունները: Տարբերությունները արտացոլվում են *Շեղում* սյունում: Եթե ունենք ապրանքների փաստացի քանակությունները տեքստային ֆայլով, այն կարող ենք ներմուծել **Այլ** ներդիրի **Ապրանքների ցուցակի ներմուծում** գործողությամբ:




| Հ/Հ | Կոդ | Անվանում | Միավոր | Հաշվ.քանակ | Փաստ.քանակ | Շեղում | Հաշվ.գումար | Գին | Վաճառքի գին | Փաստ.գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1001 | Հեռուստացույց LED Panasonic TX-LR55ET5 | հատ | 7.000 | 7.000 | 0.000 | 4,028,908.00 | 575,558.29 | 0.00 | 4,028,908.03 |
| 2 | 1002 | Հեռուստացույց LED SONY KDL-55W905A... | հատ | 12.000 | 12.000 | 0.000 | 7,445,789.20 | 620,482.43 | 0.00 | 7,445,789.16 |
| 3 | 1004 | Blu-ray նվագարկիչ Panasonic DMP-BDT1... | հատ | 10.000 | 10.000 | 0.000 | 775,277.76 | 77,527.78 | 0.00 | 775,277.80 |
| 4 | 1006 | DVD նվագարկիչ SONY DVP-SR320/B | հատ | 10.000 | 10.000 | 0.000 | 96,098.76 | 9,609.88 | 0.00 | 96,098.80 |
| 5 | 1010 | MP3/MP4 նվագարկիչ Hama "Sansa" 4Gb | հատ | 5.000 | 5.000 | 0.000 | 36,493.20 | 7,298.64 | 0.00 | 36,493.20 |
| 6 | 1011 | MP3/MP4 նվագարկիչ SONY NWZ-B172F/GI | հատ | 5.000 | 5.000 | 0.000 | 50,685.00 | 10,137.00 | 0.00 | 50,685.00 |
| 7 | 2001 | Թվային ֆոտոխցիկ Canon PowerShot SX... | հատ | 4.000 | 4.000 | 0.000 | 527,124.00 | 131,781.00 | 0.00 | 527,124.00 |
| 8 | 2003 | Տեսախցիկ Panasonic HDC-HS9EE-S | հատ | 2.000 | 2.000 | 0.000 | 554,800.00 | 277,400.00 | 0.00 | 554,800.00 |
| 9 | 3004 | Նոութբուք SAMSUNG 670Z5E NP670Z5E-X... | հատ | 2.000 | 2.000 | 0.000 | 639,000.00 | 319,500.00 | 0.00 | 639,000.00 |
| 10 | 3007 | Մոնիտոր LED SAMSUNG 20" SyncMaster... | հատ | 7.000 | 7.000 | 0.000 | 496,713.00 | 70,959.00 | 0.00 | 496,713.00 |
| 11 | 3008 | Մոնիտոր LED SAMSUNG 24" SyncMaster... | հատ | 7.000 | 7.000 | 0.000 | 519,419.88 | 74,202.84 | 0.00 | 519,419.88 |
| 12 | 3009 | Քայս MERCURY KM-81 | հատ | 37.000 | 37.000 | 0.000 | 504,380.81 | 13,631.91 | 0.00 | 504,380.67 |
| 13 | 3012 | Մուկ Genius Netscroll 120, Laser, USB | հատ | 1.000 | 1.000 | 0.000 | 28,000.00 | 28,000.00 | 0.00 | 28,000.00 |
| 14 | 3013 | Ստեղնաշար Genius Slimstar I815, Wirele... | հատ | 8.000 | 8.000 | 0.000 | 650,444.52 | 81,305.57 | 0.00 | 650,444.56 |
| 15 | 3016 | Պրոցեսոր Intel Core i7-3820 3.6 GHz | հատ | 17.000 | 17.000 | 0.000 | 2,087,778.54 | 122,810.50 | 0.00 | 2,087,778.50 |
| | | | | 512.000 | 512.000 | | 32,698,440.03 | 4,997,50... | | 32,698,439.83 |

- Ապրանքները կարելի է փնտրել կոդերով, սեղմենք Ctrl F և գրենք 7008, հաշվառված քանակը 20 է, փաստացի քանակ սյունում գրել 19, այսինքն ձևավորել պակասորդ:
- Փնտրել կոդ 7009 ,հաշվ. քանակ 5, փաստ. քանակ գրենք 7 ՝ձևավորելով ավելցուկ:



| Կոդ | Անվանում | Միավոր | Հաշվ.քանակ | Փաստ.քանակ | Շեղում | Հաշվ.գումար | Գին | Փաստ.գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7008 | Արդուկ ROWENTA DE-105 | հատ | 20.000 | 19.000 | -1.000 | 292,650.40 | 14,632.52 | 278,017.88 |
| 7009 | Օդորակիչ SPLIT SAMSUNG AQ09C5ME | հատ | 5.000 | 7.000 | 2.000 | 2,184,426.20 | 436,885.24 | 3,058,196.68 |

Սեղմել Հիշել և փակել:

- Փաստաթուղթը գրանցելուց հետո ձևակերպել առաջացած ավելցուկները և պակասուրդները:
- Ապրանքների գույքագրում փաստաթղթի վրայից մկնիկի աջ կոճակով բացել **Ստեղծել փաստաթղթի հիման վրա**…:
- Պակասորդը ձևակերպելու համար կարելի է ընտրել ***Վաճառքի փաստաթուղթ*** կամ ***Պահեստի ելքի օրդեր***: Նշենք ***Պահեստի ելքի օրդերը***: Ունենք լրացված փաստաթուղթ մեր ունեցած պակասորդի տվյալներով, կարող ենք ավելացնել Մեկնաբանություն:




| Հ/Հ | Կոդ | Անվանում | Միավոր | Հապավում | Քանակ | Գումար | Խմբաքանակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 7008 | Արդուկ ROWENTA DE-105 | 001 | հատ | 1.000 | 0.00 | Ավտոընտրություն |
| | | | | | 1.000 | 0.00 | |

- Սեղմել **Հիշել և փակել**

Ավելցուկը ձևակերպելու համար ընտրում ենք ***Պահեստի մուտքի օրդեր*** կամ ***Ապրանքների մնացորդների մուտք*** փաստաթղթերը: Ընտրել ***Պահեստի մուտքի օրդերը***: **Ընդհանուր** էջը լրացված է, **Ապրանքների ցուցակը** նույնպես լրացված է, այստեղ կարող ենք փոխել **Գնի տեսակ** դաշտը՝ նշելով այն գինը, որով ցանկանում ենք ձևակերպել մուտքը:




- Սեղմել **Հիշել և փակել**:

## Մոբայլ հավելված

ՀԾ-Առևտուր մոբայլ հավելվածը նախատեսված է ՀԾ- Առևտուր համակարգի ամպային տարբերակն օգտագործողների համար: Այն հնարավորություն է տալիս օնլայն միանալ ամպային տվյալների պահոցներին և դիտել տվյալներ: Շատ հարմար է հատկապես կազմակերպության ղեկավարների համար, քանի որ ցանկացած վայրից կարելի է վերահսկել հաշվառումը, վերլուծել և կայացնել որոշումներ:

Հավելվածը հասանելի է և Android և iOS օպերացիոն համակարգերով աշխատող սմարթֆոնների և պլանշետների համար: Ստորև տեղադրված են համապատասխան QR կոդեր, որոնք սկանավորելով կարելի է բեռնել հավելվածը:

Հավելվածի գլխավոր էջում առանձնացված է 4 հիմնական բաժին.

- **Վաճառքներ**
- **Ապրանքներ**
- **Գործընկերներ**
- **Դրամարկղեր**
- **Բանկեր**




**Վաճառքներ** բաժինը նախատեսված է ընթացիկ ամսվա վաճառված ապրանքները և ծառայությունները տեսնելու համար:




**Ապրանքներ** բաժինը նախատեսված է ապրանքների առկայությանը և շարժին հետևելու համար: Ցանկում արտացոլվում են Ապրանքների առկայությունը և Վաճառքի գները:




**Գործընկերներ** բաժինը նախատեսված է գործընկերների մնացորդներին և շարժին հետևելու համար: Գործընկերոջ պարտքերը մեր նկատմամբ արտացոլվում են դրական, իսկ մեր պարտքերը գործընկերներին նկատմամբ՝ բացասական թվերի տեսքով:




**Դրամարկղեր** բաժինը նախատեսված է դրամարկղերի մնացորդներին և շարժին հետևելու համար:




**Բանկեր** բաժինը նախատեսված է կազմակերպության հաշվարկային հաշիվների մնացորդներին և շարժին հետևելու համար:




Անմիջապես առաջին էջից կոճակով կարելի է տեսախցիկով սկանավորել ապրանքի գծիկավոր կոդը և տեսնել ապրանքի վերաբերյալ տվյալներ:

**Ցուցանիշներ** բաժինը նախատեսված է վերլուծական դիագրամների համար, որոնք օգտակար են կազմակերպության վիճակն ու դինամիկան գնահատելու համար:



## Ինքնուրույն աշխատանքների բաժին

### Առաջադրանք N1

Ապրանքների և ծառայությունների խմբեր տեղեկատուում Ծառայություններ խմբի համար ավելացնել երկու ենթախումբ.
ա) **Կոդ`** 901
**Անվանում`** Համակարգչային ծառայություններ
Կուտակիչ` 900
բ) **Կոդ`** 902
**Անվանում`** Քարթրիջի լիցքավորում
Կուտակիչ` 900

### Առաջադրանք N2

Ապրանքներ և ծառայություններ տեղեկատուում ավելացնել ծառայության նոր տեսակ` Համակարգչի վերանորոգում.
Կոդ` 9001
**Անվանում`** Համակարգչի վերանորոգում
**Տեսակ`** Ծառայություն
**Խումբ`** Համակարգչային ծառայություններ
Հիմնական չափման միավոր` Հատ

### Առաջադրանք N3

Համակարգչային վերանորոգում տեղեկատուի կոնտեքստային ցանկից Գների ձևավորում հրամանի միջոցով նշանակել վաճառքի մեծածախ և մանրածախ գներ` 7500դրամ և 9000 դրամ համապատասխանաբար.
**Ամսաթիվ`** 10.05.24
**Խումբ`** Համակարգչային ծառայություններ
1.Գնի տեսակ` Մեծածախ = 7500
2.Գնի տեսակ` Մանրածախ = 9000

### Առաջադրանք N4

12.02.24թ. դուրս գրել Կանցլեր ՍՊԸ-ին վաճառքի Հաշիվ – Ապրանքագիր Ա0040536987: Փաստաթղթի դուրս գրման եղանակը` էլեկտրոնային, ԱԱՀ-ի հաշվարկի ձևը` ԱԱՀ-ով:

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|---|
| 12 | փետրվարի | 2024թ. | | | Ա | 0040536987 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | | |
| 12 | փետրվարի | 2024թ. | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ | Առաքումների գրանցման գրքի | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | [7] | |
|---|---|---|---|---|
| | | | [8] | |
| | | | [9] | |

[10] Լրացուցիչ տվյալների (պայմաններ)

Համակարգչի վերանորոգում

| Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | 0 | 2 | 5 | 0 | 0 | 0 | 5 | 2 |
| [12] Անվանումը | ԱՍՏՂ ՍՊԸ | | | | | | | | |
| [13] Բանկային տվյալները | ՕՐԻՆԱԿԵԼԻ Բանկ | 205001265554 | | | | | | | |
| [14] Գտնվելու վայրը(հասցեն) | ք. Երևան, Չարենց փող. 1 | | | | | | | | |
| [15] Լրացուցիչ տվյալներ | Համակարգչի վերանորոգում | | | | | | | | |

| Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [16] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | | 0 | 2 | 0 | 3 | 0 | 4 | 0 | 5 |
| [17] Անվանումը | Կանցլեր ՍՊԸ | | | | | | | | |
| [18] Բանկային տվյալները | Ինեկոբանկ ՓԲԸ | 205001265554 | | | | | | | |
| [19] Գտնվելու վայրը (հասցեն) | ք. Երևան, Նալբանդյան 25/1 | | | | | | | | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | | | | | | | |
| | Լիազորագիր | Համար | | | | | | | |
| | | Ամսաթիվ | | | | | | | |

[22] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայության (աշխատանքի) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ծառայության շրջանակը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Համակարգչի վերանորոգում | Հատ | 1 | 9,000.00 | 9,000.00 | 20 | 1,800.00 | 10,800.00 |
| 2 | | | | | | | | |
| 3 | | | | | | | | |
| 4 | | | | | | | | |
| 5 | | | | | | | | |
| 6 | | | | | | | | |
| 7 | | | | | | | | |
| 8 | | | | | | | | |
| 9 | | | | | | | | |
| 10 | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | 9,000.00 | X | 1,800.00 | 10,800.00 |

Առաքող

պաշտոնը   ստորագրությունը   (անունը, ազգանունը)

պաշտոնը   ստորագրությունը   (անունը, ազգանունը)

Ստացող

պաշտոնը   ստորագրությունը   (անունը, ազգանունը)

պաշտոնը   ստորագրությունը   (անունը, ազգանունը)

## Առաջադրանք N5

29.02.24թ. համաձայն Ա0065987455 հաշիվ-ապրանքագրի Զիգզագ ՍՊԸ-ից գնել ենք հետևյալ ապրանքները: Մուտքագրել ապրանքները Կենտրոնական պահեստ:

**Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ** **Ա0065987455**

| ծ[1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ապրանքների մատակարարման) | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|---|
| 29 | փետրվար | 2024թ. | | | Ա | 00659874355 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | | |
| 29 | փետրվար | 2024թ. | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ | Առաքումների գրանցման գրքի | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | [7] Էջ | 0 |
|---|---|---|---|---|
| | "29" փետրվար 2024թ. | 250221 | [8] Տող | 0 |
| | | | [9] Համար | 367 |

| [10] Լրացուցիչ տվյալների (պայմաններ) |
|---|
| Համաձայն N 250219 պայմանագրի |

**Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի**

| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 2 | 5 | 0 | 0 | 1 | 6 | 4 |
|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | |
|---|---|---|
| [12] Անվանումը | Զիգզագ ՍՊԸ | |
| [13] Բանկային տվյալները | Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ | 21700-001125525001 |
| [14] Գտնվելու վայրը (հասցեն) | Երևան, Հյուսիսային պ. 1 շ. 18 | |
| [15] Վայր, որտեղից ապրանքները մատակարարվում են | Երևան, Հյուսիսային պ. 1 շ. 18 | |
| [16] Լրացուցիչ տվյալներ | | |

**Ապրանքներ ձեռք բերող անձի**

| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 2 | 0 | 3 | 0 | 4 | 0 | 5 |
|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| [18] Անվանումը | Աստղ ՍՊԸ | | |
| [19] Բանկային տվյալները | ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ | 22000-73941234214 | |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ք. Երևան, Չարենց փող.1 | | |
| [21] Լրացուցիչ տվյալներ | | | |
| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |
| [23] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | | | |
| [24] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ք. Երևան, Կորյունի 25 | | |

[25] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Մոնիտոր LED SAMSUNG 20" SyncMaster T20A350 | հատ | 2 | 71,000.00 | 142,000.00 | 20 | 28,400.00 | 170,400.00 |
| 2 | Մուկ Genius NetScroll 6000 Wireless, Optical, USB | հատ | 7 | 1,400.00 | 9,800.00 | 20 | 1,960.00 | 11,760.00 |
| 3 | Պրոցեսոր Intel Core i7-3820 3.6 GHz | հատ | 2 | 122,500.00 | 245,000.00 | 20 | 49,000.00 | 294,000.00 |
| 4 | Ստեղնաշար Genius Slimstar I815, Wireless, USB | հատ | 5 | 8,110.00 | 40,550.00 | 20 | 8,100.00 | 48,650.00 |
| 5 | | | | | | | | |
| 6 | | | | | | | | |
| 7 | | | | | | | | |
| 8 | | | | | | | | |
| 9 | | | | | | | | |
| 10 | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | 437,350.00 | X | 87,470.00 | 524,820.00 |